«Աջակցություն քաղաքացիների արդար դատաքննության իրավունքի պաշտպանությանը»

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԿ

2024

«Աջակցություն քաղաքացիների արդար դատաքննության իրավունքի պաշտպանությանը»

ԶԵԿՈՒՅՑ

Այս զեկույցը պատրաստվել է՝ *Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ ընթացող «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» (www.juremonia.am) ծրագրի ենթադրամաշնորհի շրջանակներում։*

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն է և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ 4
Ներածություն 5
Մշտադիտարկման նպատակը, խնդիրները եւ մեթոդաբանությունը 6
ԳԼՈՒԽ 1. «Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրով» դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով պլանավորված գործողությունները և իրականացման ժամկետները, սահմանված ժամկետում դրանց կիրառությունը չապահովելու պատճառները 8

- Քրեական դատարանի բեռնաթափում 10
- Քաղաքացիական դատարանի բեռնաթափում 12
- Վարչական դատարանի բեռնաթափում 19
- Ինչպես է ծանրաբեռնվում վարչական դատարանը 20

ԱՄՓՈՓՈՒՄ 25
ԳԼՈՒԽ 2. ԲԴԽ–ի՝ դատարանները բեռնաթափելու նպատակով ընդունած որոշումների մշտադիտարկում 27

- Գործիք 1. դատավորների անունը գործերի բաշխման ցանկից ժամանակավորապես հանելը 28
- Վարչական դատարանի դատավորներ, որոնց անունները հանվել են գործերի բաշխման ցանկից 36
- Գործիք 2. Գործուղված դատավորներ 42
- Գործիք 3. Գործերի քննության ողջամիտ ժամկետները խախտելու հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորներ 49

ԱՄՓՈՓՈՒՄ 55
ԳԼՈՒԽ 3. ԲԴԽ–ի գործունեության մշտադիտարկում

- Դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգի ստեղծում 57
- ԲԴԽ–ն 9 նստավայր փակեց մարզային դատարաններում..... 59

ԱՄՓՈՓՈՒՄ 61
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 63
Ներդիր 1..... 11
Ներդիր 2 12
Ներդիր 3 13

Հապավումների ցանկ

ՀՀ Հայաստանի Հանրապետություն

ԲԴԽ Բարձրագույն դատական խորհուրդ

ԴԴ Դատական դեպարտամենտ

ԴԻ Դատական իշխանություն

ԱՆ Արդարադատության նախարար

ՆՊ Նոտարական պալատ

ՔԿՀ Քրեակատարողական հիմնարկ

«ՀԼ» հ/կ «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն

ՀԲ Համաշխարհային բանկի

ՖԲ ֆեյսբուք

Ներածություն

Կառավարությունը 2022թ. հուլիսի 21-ին N1133-Լ որոշումով հաստատեց **«ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թթ. ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը[1]»:** Այն կառավարության նախորդ՝ 2019թ. հոկտեմբերի 10-ին N 1441-Լ որոշումով ընդունված և անավարտ մնացած «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրի» շարունակությունն է:

Ծրագրում շարադրված բազմաթիվ ռազմավարական նպատակներից «Հետաքննող լրագրողներ» հ/կ-ն սույն ծրագրով մշտադիտարկել է «Դատական համակարգի բարեփոխումների շարունակական ապահովում» նպատակի ներքո ներառված գործողությունների իրականացումը: Մասնավորապես, ընդհանուր իրավասության դատարանների և վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով պլանավորված գործողությունների կատարումը սահմանված ժամանակամիջոցում, դրանք նվազեցնելու համար կիրառված գործիքակազմերի արդյունավետությունը և համակարգի վրա ունեցած ազդեցությունը:

Պարզել, թե ծրագրային գործողությունները որքանով նպաստեցին՝

ա) դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանը,

բ) գործերի քննության ժամկետների կրճատմանը,

գ) արդարադատության արդյունավետության բարձրացմանը,

դ) արդարադատության որակի բարելավմանը և այլն:

Հեղինակներ՝

Սառա Պետրոսյան

Գրիշա Բալասանյան

Հայկ Դավթյան

[1] Ռազմավարությունն ընդունվել է ՀՀ կառավարության 2022 թ. հուլիսի 21-ին N1133-Լ որոշմամբ:

Մշտադիտարկման նպատակը, խնդիրները եւ մեթոդաբանությունը.

«ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության ծրագրի» կատարումը ծրագրային գործողությունների ժամանակացույցով պլանավորված ժամկետներում:

Խնդիրները՝

1. Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրով դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելուն միտված գործողությունների իրականացման ընթացքը, չիրականացնելու պատճառները:
2. Դատավորների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով դատավորների անունը գործերի բաշխման ցանկից ժամանակավորապես հանելու գործիքի արդյունավետությունը: Գործերի բաշխման ցանկից դատավորների անունները հանելու վերաբերյալ դիմումների հիմնավորվածությունը:
3. Դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով դատավորներին այլ դատարաններ գործուղելու գործիքի արդյունավետությունը:
4. Գործերի քննության ողջամիտ ժամկետները խախտելու հիմքով դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ԲԴԽ-ի կայացրած որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը, դրանց ազդեցությունը համակարգի վրա:
5. Դատարանների ծանրաբեռնվածության պատճառները:

Մշտադիտարկման ժամանակահատվածը՝ 2023թ.–ը և 2024թ.–ի նոյեմբերի 15–ը:

<u>Մեթոդաբանություն</u>

Տվյալները հավաքագրել ենք՝

- Արդարադատության նախարարության «Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի» կատարման մշտադիտարկման www.datairav.am հարթակից:
- Դատական իշխանության պաշտոնական www.court.am կայքից, որտեղ հրապարակվում են ԲԴԽ–ի ընդունած որոշումները՝ դատավորներին

ժամանակավորապես դատական գործերի բաշխման ցանկից հանելու, դատավորներ գործուղելու, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին և այլ որոշումներ:

- Դատարաններում քննվող և դատավորների վարույթում եղած գործերի տարեկան և կիսամյակային վիճակագրության ուսումնասիրություն:
- ԲԴԽ–ի ընդունած որոշումների համապատասխանություն ռազմավարության ծրագրի նպատակներին:
- Տեղեկատվություն ստանալու նպատակով գրություններ ենք ուղարկել՝ Բարձրագույն դատական խորհրդին, Դատական դեպարտամենտին, Արդարադատության նախարարին և Նոտարական պալատի նախագահին:
- Քրեական և վարչական դատարաններում քննվող դատական գործերի մշտադիտարկում՝ նիստերի ձգձգումների պատճառներն արձանագրելու և դատարանների ծանրաբեռնվածության պատճառները բացահայտելու նպատակով:
- Հետևել ենք «Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրով» դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելուն միտված գործողությունների իրականացման ժամանակացույցին: Բարեփոխումների ծրագրով պլանավորված գործողությունները սահմանված ժամանակամիջոցում չիրականացնելու համար բացատրություններ ենք խնդրել պատասխանատուներից: Հավաքագրված դատական վիճակագրությունը ներկայացրել ենք նաև վիզուալիզացիայի միջոցով:

ԳԼՈՒԽ 1

«Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրով» դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով պլանավորված գործողությունները և իրականացման ժամկետները, սահմանված ժամկետում դրանց կիրառությունը չապահովելու պատճառները:

Դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու հարցն ընդգրկված է «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության ծրագրում»: Դատաիրավական բարեփոխումների պատասխանատուներն են՝ Արդարադատության նախարարությունը (ԱՆ) և Բարձրագույն դատական խորհուրդը (ԲԴԽ):

Քրեական գործեր քննող դատարանները բեռնաթափելու համար նախատեսվել է՝

- Գործարկել «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի քրեական գործերով էլեկտրոնային մոդուլը,
- արդիականացնել դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման համակարգը,
- կատարելագործել դատական ակտերի պաշտոնական հրապարակման համակարգը,
- ներդնել e-criminal case (քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգ) էլեկտրոնային կառավարման համակարգը:

Իրականացման ժամանակացույց.

Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի ժամանակացույցով երեքն էլ պետք է իրականացված լինեին: «Էլեկտրոնային դատարան» միասնական կառավարման համակարգը գործարկելու ժամկետը նախատեսված էր 2024թ. 2–րդ եռամսյակում, սակայն կառավարության որոշումով հետաձգվել է 2024թ.–ի 4–րդ եռամսյակ: Ասվում է, որ ներկայումս Համաշխարհային բանկի (ՀԲ) աջակցությամբ մշակվում է քրեական գործերով էլեկտրոնային մոդուլի տեխնիկական

առաջադրանքը: Այս համակարգերը ներդնելու արդյունքում կանխատեսում են, որ քրեական վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթների առնվազն 20%–ը կիրականացվի էլեկտրոնային եղանակով:

Քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման e-criminal case համակարգը հնարավորություն կընձեռի վարույթի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթաշրջանառությունն իրականացնել էլեկտրոնային եղանակով: Համակարգը ներդնելով ակնկալվում է՝

- քրեական գործերի քննության ընթացքում կնվազեն սխալները,
- քրեական գործերը կքննվեն առավել արագ և արդյունավետ, ինչպես նաև՝ նվազ ծախսատար եղանակով,
- կհեշտանա քրեական գործերի քննության ընթացքում ապացույցների ձեռքբերումը:

Համակարգը պլանավորված էր գործարկել 2023թ. 4-րդ եռամսյակում:

Արդարադատության նախարարությունը գործարկում է «Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի» կատարման մշտադիտարկման www.datairav.am հարթակում հրապարակված հաշվետվությունը տեղեկացնում է, որ **e-criminal case համակարգը լիարժեք չի աշխատում և չի դյուրինացվել քրեական գործերի քննության ընթացքում ապացույցների ձեռքբերումը: Համակարգի քայլերի հաջորդականությունը ևս ամբողջապես ապահովված չէ:**

Դատավորների ծանրաբեռնվածության պատճառներից էր համարվում նաև այն, որ դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման համակարգը հաշվի չէր առնում դատավորների ծանրաբեռնվածությունը և գործերի բարդությունը: Հաշվետվության համաձայն՝ 2023թ. հուլիսից ներդրված գործերի մակագրման նոր համակարգն ընկալում է թեթև և բարդ գործերը և դրանք հավասարաչափ է մակագրում դատավորներին: Այս գործողությունը 40%-ով իրականացված է համարվում:

«Էլեկտրոնային դատարան» և «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգերի գործարկումը հետաձգելու պատճառների մասին «Հետաքննող լրագրողներ» հ/կ–ի հարցմանն ի պատասխան՝ ԱՆ–ից հայտնել են, որ Արդարադատության նախարարությունը զուգահեռաբար իրականացնում է արդարադատության ոլորտի մի շարք, այդ թվում՝ տարբեր մասնագիտացման գործերով դատավարությունների թվայնացման աշխատանքներ: Թվայնացման ծրագրերը գործնականում բազմաթիվ փուլեր են անցնում՝ տեխնիկական

առաջադրանքի համար ուսումնասիրություններից, դրա մշակումից և լրամշակումից մինչև մրցութային ընթացակարգեր, համակարգերի մշակում, փորձարկումներ և այլն:

Հընթացս անհրաժեշտ է լինում փուլ առ փուլ, պարբերաբար քննարկումներ իրականացնել շահագրգիռ մարմինների հետ, հայեցակարգերը համաձայնեցնել Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի հետ, կատարել փորձարկումներ, դրանց հիման վրա, ըստ անհրաժեշտության, փոփոխություններ կատարել մշակված լուծումներում, նաև՝ այլ համակարգերի գործնական կիրառման ընթացքում արձանագրված խնդիրների հիման վրա և այլն:

«Այս գործընթացում երբեմն փոփոխվում է թվայնացման տրամաբանությունը, գործնականում համակարգի պատշաճ ներդրման և գործարկման համար պահանջվում է առավել երկար ժամանակ, քան նախապես սահմանված ժամկետն է: Այս համատեքստում են երկարաձգվել թվայնացման մի քանի ծրագրերի իրականացման համար սահմանված ժամկետները»,- հայտնել է ԱՆ–ն:

Քրեական գործեր քննող դատարանները բեռնաթափելու նպատակով հետևյալ գործողություններն են իրականացվել՝

- Քրեական օրենսգրքում 2023թ. օգոստոսի 7–ին օրենսդրական փոփոխություններ են կատարվել, նախատեսվել է որոշ՝ ոչ մեծ ծանրության հանցագործություններով գրավոր ընթացակարգի ներդնում՝ կողմերի միջև հաշտության և տուգանքին առնչվող փոփոխություններ: Թեթեւ հանցանքների դեպքում, եթե անձը մեղքն ընդունում է՝ 15 օրյա ժամկետում գրավոր կարգով դատավճիռ են կայացնում՝ տուգանքի նվազագույն չափ նշանակելով:
- Դատարանը, եթե նախկինում հարցում էր կատարում Պետեկամուտների կոմիտե կամ անձի դատվածությունը ճշտելու համար՝ ոստիկանություն, այդ պատճառով կարող էր նաև հետաձգել դատական նիստը, այժմ բոպեների ընթացքում Mulberry համակարգով ստանում է տեղեկատվությունը:
- Համալրվել են նաև դատավորների թափուր հաստիքները:

Արդյունք՝ քրեական դատարանները կբեռնաթափվեն շուրջ 40%–ով:

Հիմնախնդիրը. Դատարանների ծանրաբեռնվածության և բեռնաթափելուն միտված գործողությունների մասին դատական իշխանության ղեկավարներն ավելի շատ խոսում են սոցիալական հարթակներում: Հասկանալի է, որ այստեղ չափելի ցուցանիշներ չեն ներկայացվում: Բարձրագույն դատական խորհրդի (ԲԽԴ) նախագահ Կարեն Անդրեասյանը 2023թ.–ի դեկտեմբերի 15–ին Դատական իշխանության ֆեյսբուքի էջում հայտնել է, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում քրեական դատարանները կբեռնաթափվեն շուրջ 40%–ով: ԲԴԽ–ն

վիճակագրական տվյալներ չի ներկայացնում, թե այդ բնույթի գործերը քանի՞ տոկոս են կազմում դատարանում և օրենքը կիրառելու արդյունքում որքանո՞վ նվազեց գործերի քանակը դատարանում։

Ներդիր 1.

Քրեական օրենսգիրք, հոդված 81. Քրեական պատասխանատվությունից ազատելը գործուն զղջալու հիմքով

1. Եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նա համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը:

1.1. Եթե անձի առաջին անգամ կատարած հանցանքը ծանր կամ առանձնապես ծանր հանցանք է, ապա հանցավորի դերի, հանցանքը կատարելիս կամ դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ գործոնների առկայության դեպքում նա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը: Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը:

Դատավորների թափուր հաստիքների համալրում. համալրում եղել է, սակայն ուսումնասիրության ընթացքում բացահայտվեց, որ համալրումը կարող է նաև ձևական լինել։ Այսպես. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արթուր Մկրտչյանը ԲԴԽ-ի առաջարկությամբ 2024թ. մարտի 25-ին, թոշակի անցնելուց 3 ամիս առաջ նշանակվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր։ Սակայն, նա այդպես էլ Սյունիքում դատավոր չաշխատեց։ Հանրապետության նախագահի հրամանագրի հաջորդ օրը ԲԴԽ-ն որոշում է կայացրել Արթուր Մկրտչյանին 2024թ.–ի մարտի 26-ից գործուղել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ շարունակելով քննել այդ դատարանի դատավորի կարգավիճակում իր վարույթում եղած գործերը։ Թոշակի անցնելուց 3 ամիս առաջ նրան Սյունիքում դատավոր նշանակելն արդարացված չէր։ Նա ունեցել է անավարտ գործեր, որոնք պետք է ավարտեր թոշակի անցնելուց առաջ և կիսատ մնացած գործերով չծանրաբեռներ մյուս դատավորներին։

Մեր ուսումնասիրությունը բացահայտեց, որ քրեական գործերով դատական նիստերը, հիմնականում, չեն կայանում հետևյալ պատճառներով՝

1. կալանավորին ՔԿՀ-ից դատարան չեն բերում՝ ուղեկցող անձնակազմի ծանրաբեռնված լինելու, մեքենա, վառելանյութ չլինելու պատճառներով,
2. վկաներին դատական նիստերին չապահովելու պատճառով,
3. դատական նիստերի դահլիճների ծանրաբեռնվածության, այսինքն՝ ազատ դահլիճ չլինելու և այլ պատճառներով։

Ներդիր 2

Երևանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում քննվող գործով դատական նիստը ավելի քան մեկ ժամ ուշացումով սկսվեց, որովհետև Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկից (ՔԿՀ) կալանավորին ուշացումով բերեցին դատարան: Նիստերի քարտուղարն այդ ընթացքում մի քանի անգամ կալանավայր զանգեց՝ պարզելու, թե գործով մեղադրյալին երբ են բերելու: Պատասխանել էին, որ մեքենա չկա կալանավորին բերելու համար, դատարան ուղևորված մեքենաները պետք է վերադառնան, որ մյուսներին տեղափոխեն:

Դատավոր Արտուշ Գաբրիելյանն այս գործով արդեն երկրորդ անգամ էր բացատրություն պահանջում մեղադրյալին ուղեկցողներից, որոնք կանայք են: «Ամեն անգամ մի պատճառաբանություն եք ներկայացնում՝ մեքենա չկա, բենզին չկա, ուղեկցող անձնակազմ չկա»,– ասաց նա: Դատավորի դժգոհությանը միացան նաև գործով մասնակցող փաստաբաններն ու դատախազը՝ ավելացնելով, որ համատարած այս վիճակն է և դատարանին խնդրեցին միջնորդագիր ուղարկել ՔԿՀ:

Քաղաքացիական գործեր քննող դատարանները բեռնաթափելու նպատակով հետևյալ գործողություններն են իրականացվել՝

1. 2023թ. դեկտեմբերի 11-ից բանկերը, վարկային կազմակերպությունները, էներգետիկայի, ջրային և հեռահաղորդակցության ոլորտի օպերատորները 2 մլն դրամը չգերազանցող գումարի բռնագանձման պահանջով իրենց դիմումները ներկայացնում են նոտարներին՝ սպառողների կամ հաճախորդների հետ կնքված պայմանագրերի հիման վրա:
2. Տեխնիկական թերությունների պատճառով հայցադիմումը վերադարձնելու գործառույցը վերապահվել է դատարանի աշխատակազմին:
3. Համալրվել են դատավորների թափուր հաստիքները,
4. Բարձրացել է դատավորների աշխատավարձը:
5. Կներդրվի հաշտարարության ինստիտուտը:

Արդյունք. քաղաքացիական դատարանների 90%–ով բեռնաթափում, գործերի քննության էական արագացում:

Թվարկված առաջին չորս գործողություններն իրականացվել են այս տարի, իսկ վերջինը՝ հաշտարարության ինստիտուտը, կսկսի գործել 2025թ.–ից:

Դատական իշխանությունը 2023թ. դեկտեմբերի 11–ին իր ՖԲ պաշտոնական էջում հայտարարեց, որ 2024թ. առաջին կիսամյակից դատավորների ծանրաբեռնվածությունը կսկսի նվազել, որի արդյունքում քաղգործեր քննող դատարանները մինչև 90% կբեռնաթափվեն: Այսինքն՝ քաղաքացիական

դատարաններում 2000-4000 գործ ունեցող դատավորները հաջորդ տարվա գարնանից կունենան 200-300 գործ:

«Հետևաբար՝ քաղաքացիական գործերն առաջին ատյանում 2024 թվականի կեսերից կտևեն ոչ թե տարիներ, այլ մի քանի ամիս: Այս բարեփոխումը տևեց շուրջ մեկ տարի, քանի որ պետք էր օրենսդրական փոփոխություն, համակարգչային նոր ծրագրի մշակում, նոտարիատի ու հարկադիր ծառայության ծրագրերի համակցում և նոտարիատի վերապատրաստում»,– հայտնեցին Դատական իշխանության ՖԲ պաշտոնական էջում:

Ներդիր 3

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենք

Հոդված 82.4-րդ հոդված. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմում ներկայացնելը

1. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը (այսուհետ՝ դիմում) ներկայացնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի (ներառյալ՝ տուժանքի (տուգանքի, տույժի), տոկոսների և այլ վճարների) բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմում նոտարին ներկայացնում են բանկերը, վարկային կազմակերպությունները, ինչպես նաև էներգետիկայի (էլեկտրաէներգետիկայի, ջերմամատակարարման, գազամատակարարման), ջրային և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) ոլորտներում կարգավորվող գործունեություն իրականացնող անձինք (այսուհետ սույն գլխում նաև՝ դիմող)՝ սպառողների կամ հաճախորդների հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

«Քաղաքացիական դատավարության օրենսգրքում» և «Նոտարիատի մասին» օրենքում կատարված փոփոխություններն օրինական ուժի մեջ մտան 2023թ. դեկտեմբերի 11-ից: Այդ օրից 2 մլն դրամը չգերազանցող գումարի (ներառյալ՝ տուժանքի, տոկոսների և այլ վճարների) բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմում նոտարին ներկայացնում են բանկերը, վարկային կազմակերպությունները, ինչպես նաև էներգետիկայի, ջրային և հեռահաղորդակցության ոլորտներում կարգավորվող գործունեություն իրականացնող անձինք՝ սպառողների կամ հաճախորդների հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքում և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում 2023թ. հունիսի 26-ին օրենսդրական փոփոխություններ ու լրացումներ կատարելուց առաջ ԲԴԽ-ն պարտավոր էր ներդնել մշտադիտարկում և վիճակագրություն վարելու համակարգ, հրապարակել, թե այդ բնույթի գործերն ինչ թիվ են կազմում դատարանում, սահմանել դրանց թվաքանակը նվազեցնելու չափելի

ցուցանիշներ, որպեսզի հետագայում հնարավոր լիներ պարզել, թե օրենսդրական փոփոխության արդյունքում որքանով նվազեց քաղաքացիական գործեր քննող դատարանների ծանրաբեռնվածությունը:

Ներկայումս մենք համեմատական ցուցանիշներ չունենք և չենք կարող ասել, թե նոտարներին փոխանցված նոր լիազորությունը որքանո՞վ նվազեցրեց քաղաքացիական դատարանների ծանրաբեռնվածությունը: Ուստի, 2024թ. մարտ ամսին Դատական դեպարտամենտին ուղղված գրությամբ խնդրեցինք հայտնել, թե

ա/ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում մեկ դատավորին օրական միջին հաշվով քանի՞ գործ է մակագրվել մինչև «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում» 2023թ. հունիսի 26-ին կատարված փոփոխություններն ու լրացումները:

բ/ Օրենսգրքի փոփոխություններն ու լրացումներն ուժի մեջ մտնելուց հետո նույն դատարանի դատավորներին օրական միջին հաշվով քանի՞ գործ է մակագրվում:

Այսինքն, ցանկանում էինք պարզել, թե 2 մլն դրամը չգերազանցող գումարի բռնագանձման պահանջով դիմումները քաղաքացիական դատարանում ինչ տոկոս են կազմել: ԴԴ–ից հայտնեցին, որ այդպիսի վիճակագրություն չեն վարում:

Օրենքի փոփոխություններն ուժի մեջ մտնելուց 9 ամիս անց դարձյալ չտրամադրեցին հստակ վիճակագրական տվյալներ, որից պարզ կլիներ, թե կատարված փոփոխությունը որքանով նվազեցրեց քաղաքացիական գործեր քննող դատարանի ծանրաբեռնվածությունը: Ոլորտը համակարգող պաշտոնյաները սոցիալական ցանցերում հրապարակեցին, որ 2024թ. առաջին կիսամյակում քաղաքացիական գործեր քննող դատարանների ծանրաբեռնվածությունը նվազել է 80%–ով: Այս ցուցանիշը հավաստի չի կարող համարվել, քանի որ չեն ներկայացնում համեմատական վիճակագրական տվյալներ, հաշվարկների մեթոդաբանություն: Դրանց բացակայությունը մեզ հիմք է տալիս ասելու, որ սոցցանցերում արվող այդ հրապարակումները զուտ քարոզչական բնույթ ունեն և չեն արտացոլում իրական պատկերը:

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը 2024թ. օգոստոսի 7-ին Ֆեյսբուքի իր էջում գրեց. «Արդարադատության նախարարությունը 7 ամիս առաջ գործարկեց նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու հարթակը: Ինստիտուտը նորամուծություն էր Հայաստանում և նպատակ ուներ բեռնաթափել դատական համակարգը՝ բռնագանձման փոքր գործերը հանձնելով նոտարների իրավասությանը: Հարթակի գործարկումից մինչ օրս ստացվել է ավելի քան 12 հազար դիմում, և նոտարներն արդեն արձակել են ավելի քան 6300 կարգադրություն»:

Նույն մեկնաբանության տակ **Արդարադատության նախարարություն** օգտատերը հետևյալ գրառումը կատարեց. «Մինչև 2 մլն դրամ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու հնարավորությունը նոտարներին տրամադրելու արդյունքում շուրջ 80%-ով բեռնաթափվել է քաղաքացիական դատարանի ծանրաբեռնվածությունը, ինչի արդյունքում քաղաքացիների այլ՝ ավելի բարդ գործերով հայցերի քննության ժամկետները էականորեն կրճատվել են»:

Դեպարտամենտը կիսամյակը մեկ անգամ սահմանափակ ծավալով վիճակագրական տեղեկություններ է հրապարակում դատարանում քննվող գործերի վերաբերյալ՝ ըստ հոդվածների և ըստ դատավորների վարույթում եղած գործերի քանակի: Վիճակագրությունը, հիմնականում, վերաբերում է առաջին ատյանի դատարանների գործունեությանը: Կիսամյակային վիճակագրական տվյալների հիման վրա մեր կատարած հաշվարկները նախարարի հրապարակած ցուցանիշը չեն ապահովում:

Այսպես՝ 2024թ. 1-ին կիսամյակի տվյալներով՝ քաղաքացիական դատարանին նախորդ տարիներից փոխանցվել է 60 263 գործ, ևս 12 683 հայցադիմում մուտք է եղել առաջին կիսամյակում: Ընդհանուր՝ 72 946 գործ, իսկ նախարարը հայտարարել է, որ 1-ին կիսամյակում գործերի քանակը նվազել է 12 000–ով: Դատարանը 80%-ով բեռնաթափելու համար գործերի քանակը պետք է կրճատվեր 58 356-ով և ոչ թե 12 000-ով: Սա՝ մեր հաշվարկով: Հետաքրքիր կլինի նախարարության թվաբանությունը կամ հաշվարկելու մեթոդաբանությունը տեսնել, թե ինչպես են 80%–ով նվազեցրել դատարանի ծանրաբեռնվածությունը: Ի՞նչ հիմնավորումներ ունեն պնդելու, որ ավելի բարդ գործերով հայցերի քննության ժամկետներն էականորեն կրճատվել են:

Օրենսդրական փոփոխության ազդեցությունը պարզելու համար փորձեցինք վիճակագրական տվյալներ ձեռք բերել Նոտարական պալատից: Պարզվեց, որ Պալատը նույնպես վիճակագրություն չունի, որովհետև վիճակագրական տվյալների հաստատված ձևանմուշում «մոռացել են» վճարման կարգադրություն արձակելու դիմումների վերաբերյալ հաշվետվության պահանջ ներառել:

Նոտարական պալատից հայտնել են, որ նոտարը յուրաքանչյուր եռամսյակ Արդարադատության նախարարություն և Նոտարական պալատ է ներկայացնում նոտարական գործունեության մասին վիճակագրական տեղեկություններ պարունակող հաշվետվություն՝ Վիճակագրական պետական խորհրդի 2020թ. փետրվարի 27-ի որոշմամբ հաստատված ձևով: **Դրանից օգտվելով էլ Նոտարական պալատը կարողանում է հայտնել այս կամ այն տվյալը: Սակայն, նշված հաշվետվության ձևում առայժմ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումներին առնչվող տեղեկությունների համար տող ներառված չէ:**

2024թ. հունիսի 4-ին հարցում էինք ուղարկել **Նոտարական պալատի նախագահին՝** խնդրելով տրամադրել տեղեկություններ, թե օրենքով նոտարներին գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու լիազորություն տալու օրվանից մինչ 2024թ. մարտի 31-ը ներառյալ, գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու ընդհանուր քանի՞ դիմում է ներկայացվել: Դրանցից քանի՞սն են ընդունվել, քանի՞սն են վերադարձվել կամ մերժվել:

Նոտարական պալատը պահանջված տեղեկատվությունը չի տրամադրել՝ պատճառաբանելով, որ պաշտոնական վիճակագրություն չունեն: «ՀԼ» հ/կ–ի երրորդ հարցումից հետո միայն տեղեկատվություն տրամադրեցին:

2024թ. առաջին 6 ամսում, հունիսի 30-ի դրությամբ՝ ներկայացվել է գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին 8525 դիմում, որից 7176-ով արձակվել է կարգադրություն:

Նոտարական պալատը հայտնում է, որ էլեկտրոնային համակարգը տվյալները ֆիլտրելու հնարավորություն չունի և չեն կարող տեղեկատվությունը տրամադրել ըստ կազմակերպությունների՝ բանկ, վարկային կազմակերպություն և այլն: «Պալատն արդեն իսկ ներկայացրել է առաջարկ նման բովանդակությամբ տող ավելացնելու վերաբերյալ, սակայն առայժմ նոր ձև հաստատված չէ»,– տեղեկացրել է ՆՊ–ն:

Դեռևս 2024թ. օգոստոսի 7-ին Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի՝ իր ՖԲ էջում հայտնած տվյալները չեն համընկնում Նոտարական պալատի տրամադրած տեղեկատվության հետ: Նախարարը հայտնել էր, որ 7 ամսում կայացվել է 6300 կարգադրություն, մինչդեռ Պալատից մեզ հայտնել են 6 ամսում արձակած 7176 կարգադրության մասին: Կասկածելի է նաև 12 հազար դիմումների թիվը 7 ամսում, այն դեպքում, երբ 6 ամսում ներկայացվել է 8525 դիմում: Ստացվում է, որ միայն հուլիս ամսին գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու 3475 դիմում է ներկայացվել, երբ նախորդ 6 ամիսներին միջինը ներկայացվել է ամսական 1420 դիմում:

Ուշագրավ մի հանգամանք ևս. նախարարն ի՞նչ թվեր է հրապարակել, երբ այդ ժամանակ Նոտարական պալատից մեզ հայտնել են, որ վիճակագրություն չունեն:

Գումարի բռնագանձման պահանջի գործերով նոտարը դիմումն ստանալուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում, պարտապանին ծանուցում է դիմումի մասին՝ առաջարկելով ծանուցումն ստանալուց հետո՝ 20 օրվա ընթացքում, կատարել պարտավորությունը կամ ներկայացնել իր առարկությունները գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմումի վերաբերյալ:

Նոտարը դիմումը բավարարելու դեպքում արձակում է կարգադրություն, որը կողմերի համար դառնում է պարտադիր այն արձակելուց 10 օր հետո: Կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը, այլ հիմքերից բացի, մերժվում է,

եթե պարտապանը ծանուցում ստանալուց հետո՝ սահմանված 20-օրյա ժամկետում, ներկայացրել է առարկություն կամ կատարել է վճարման պահանջը:

Նշենք, որ նոտարի արձակած կարգադրությունը կողմերը կարող են վիճարկել դատարանում՝ գումարի բռնագանձման պահանջով կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելով: Դատական դեպարտամենտին խնդրել էինք հայտնել, թե 2024թ. առաջին կիսամյակում 2 մլն դրամը չգերազանցող գումարի բռնագանձման պահանջով քանի՞ հայցադիմում է մուտքագրվել դատարան, և նշված հայցադիմումներից քանի՞սն են ընդունվել վարույթ:

Ինչպես միշտ, Դեպարտամենտից հայտնել են, որ դատարանների գործունեության վերաբերյալ վիճակագրություն վարվում է տարին 2 անգամ՝ կիսամյակային և տարեկան պարբերականությամբ, որը հրապարակված է դատական իշխանության պաշտոնական կայքում: **«Ձեր գրությամբ բարձրացված հարցադրումների վերաբերյալ Դատական դեպարտամենտի կողմից առանձին դատական վիճակագրություն կամ այլ հաշվառում չի վարվում»,**- նշել է դեպարտամենտի աշխատակազմի ղեկավարի պարտականությունները կատարող Նաիրի Գալստյանը:

Փաստացի, չկա նաև հրապարակված տվյալ, թե նոտարի կայացրած վճարման կարգադրություններից քանիսն է բողոքարկվել դատական կարգով: Գուցե դրանք մեծ թիվ են կազմում, և դրանով նույնպես դատարանները ծանրաբեռնվում են:

Դատական իշխանության www.court.am կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2024թ. առաջին կիսամյակում գումարի բռնագանձման պահանջով 4966 հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարաններ, որից 4151-ն ընդունվել է վարույթ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում մուտք է եղել 70 054 հայցադիմում, որից վարույթ է ընդունվել 60 402-ը: Բացի այդ, 2023թ. առաջին կիսամյակում ստացվել է նաև 6773 վճարման կարգադրություն արձակելու դիմում, իսկ 2024թ. առաջին կիսամյակում՝ 287 դիմում:

Հնարավոր չէ ասել, թե այս հայցադիմումներից քանիսով է մինչև 2 մլն դրամ բռնագանձելու պահանջ ներկայացվել, քանի որ առանձնացված վիճակագրություն չկա: Սակայն, եթե դիտարկենք գումարի բռնագանձման պահանջով դատարան մուտք եղած ընդհանուր հայցադիմումներն ու դիմումները, պարզ գումարման միջոցով ստացվում է, որ 2024թ. առաջին կիսամյակում գումարի բռնագանձման պահանջով, այդ թվում՝ վճարման կարգադրություններով, դատարան է մուտքագրվել 5253 հայցադիմում և դիմում: Եթե այդ թիվը համեմատենք 2023թ. առաջին կիսամյակի թվերի հետ, ստացվում է, որ այս տարի գումարի բռնագանձման պահանջով 71 574 գործ պակաս է մուտքագրվել: Ակնհայտ է, որ գումարի բռնագանձման պահանջով գործերի քանակը նվազել է, բայց ինչպե՞ս:

Ավելին, համեմատելով 2023-2024 թվականների առաջին կիսամյակների ընթացքում դատարանների ստացած նոր հայցադիմումների քանակը, պարզ է դառնում, որ այս տարի հայցերը 62 785-ով նվազել են: Մասնավորապես, եթե 2023թ. առաջին կիսամյակում ստացվել է 75 468 դիմում կամ հայցադիմում, ապա 2024թ. նույն ժամանակահատվածում՝ 12 683–ը: Տարբերությունն ահռելի է, սակայն որոշիչ դերակատարություն չունի, առավել ևս 80% կրճատման չեն հանգեցնում նոտարներին ուղարկված վճարման կարգադրությունների գործերը, ինչի մասին թմբկահարում են ոլորտի պատասխանատուները: Նկատի ունենանք, որ նոտարներին այդ գործերից բաժին է հասել ընդամենը 8525-ը: Առայժմ անհասկանալի է, թե ինչպես է նվազել դատարան մուտք եղած գործերի թիվը: Դատական իշխանությունն այս հարցին չի պատասխանում:

Հաշտարարության ինստիտուտի ներդնում.

Պարտադիր հաշտարարության ինստիտուտի ներդրումը նույնպես պետք է նպաստի քաղաքացիական գործեր քննող դատարանների ծանրաբեռնվածության թեթևացմանը և արագացնի գործերի քննությունը: 2023թ.–ին «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի, Հայկական բարեգործական ընդհանուր միության եւ Ամերիկայի հայ իրավաբանական միության կողմից հիմնադրվել է **Արբիտրաժի եւ հաշտարարության հայաստանյան նոր կենտրոնը**:

Ակնկալվում է, որ վերջին տարիներին հաշտարարության ոլորտում իրականացված բարեփոխումները կարևոր ազդեցություն են ունենալու արդարադատության համակարգի վրա: Արդարադատության նախարարության կողմից արտոնագրված հաշտարարները լուծելու են՝

1. աշխատանքային վեճերը, եթե պայմանագրում նշված է, որ պետք է լուծվեն հաշտարարի միջոցով: Հաշտության չգալու դեպքում՝ նոր դիմել դատարան:
2. Պարտադիր հաշտարարության ենթակա են ընտանեկան գործերով 7 տեսակի վեճեր՝ ամուսնալուծության, երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու, երեխայի խնամքին, ուսմանն ու դաստիարակությանն առնչվող վեճերը, ամուսինների միջև գույքի բաժանման, առանձնացման հետ կապված վեճերը, ալիմենտի, ապրուստավճարի հետ կապված վեճերը:

Կողմերը դատարան դիմելու իրավունք կստանան միայն հաշտարարի տված համապատասխան փաստաթղթի հիման վրա, այն դեպքում, երբ վեճը չի լուծվել արտադատական ճանապարհով: Հաշտարարին դիմելու դեպքում վեճը լուծում կստանա մեկ–երկու ամսում, ավարտելուց հետո հաշտության համաձայնությունը կներկայացնեն դատարանի հաստատմանը, որից հետո այն համարվում է ուժի մեջ մտած վճիռ:

Բարեփոխումների արդյունքում հաշտարարների համայնքն այս տարի համալրվել է շուրջ 80 նոր հաշտարարով, որոնք անցել են միջազգային առաջատար ստանդարտներին համապատասխան վերապատրաստում: Հաշտարարների ինքնակառավարվող կազմակերպությունը խորհրդի նախագահ է ընտրել՝ «ԱՄ» իրավաբանական ընկերության բաժնետեր, փաստաբան Վանիկ Մարգարյանին: Հաշտարարության ինստիտուտը կսկսի գործել 2025թ.–ից:

Վարչական գործեր քննող դատարանները բեռնաթափելու համար իրականացվել է՝

2024թ. մայիսի 2–ին օրենսդրական փոփոխություններ են կատարվել Վարչական դատավարության օրենսգրքում (Գլուխ 3, գործերի ընդդատությունը, հ**ոդված 10–ի 1–ին մաս),** որոնք ուժի մեջ կմտնեն 2025թ.–ի հունվարի 1-ից: Հունվարից քաղաքացիական գործեր քննող դատարանին կփոխանցվեն մինչ այդ Վարչական դատարանին ընդդատյա հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝

1) հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը:

1) նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը. նոտարից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու գործերը,

2) նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերը:

բ/ Դատական ծանուցումների հարցի քննարկումը:

ԲԴԽ–ն 2024թ. մարտի 18-ին որոշում ընդունեց՝ **«առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի նախագահների դատարանում գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման նկատմամբ մշտադիտարկման լիազորության առավել արդյունավետ իրացման մասին»**: Արդյունքում, Դատական դեպարտամենտը լիարժեքորեն կտիրապետի մշտադիտարկման ամբողջական տեղեկատվությանը, ինչը հնարավորություն կընձեռի հասկանալ՝ կոնկրետ որ պաշտոնյայի մեղքով են ձգձգվում դատական գործերը և տվյալ պաշտոնյաներին պատասխանատվության ենթարկելու միջոցներ կձեռնարկեն:

Միաժամանակ, Դատական դեպարտամենտը հայտարարեց, որ առաջնորդվելով իր կանոնադրական լիազորություններով (դատական գործերի տևողության կապակցությամբ տեղեկատվության հավաքագրման ու տրամադրման ապահովում) սկսել է ուսումնասիրություն այս պահին առավել ծանրաբեռնված դատավորների շրջանում: Մասնավորապես, հարցումներ են ուղարկվել քաղաքացիական, քրեական

և վարչական դատարաններ՝ խնդրելով ներկայացնել պարզաբանումներ: Ստացված պատասխանների վերլուծության արդյունքում վեր կհանվեն դատական գործերի քննության ձգձգումներին պատճառ հանդիսացող խնդիրները և կմշակվեն դրանց լուծման ուղղությամբ առաջարկները:

Նշենք, որ դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու պարտավորություն ունեցող ԲԴԽ նախագահը մինչ օրս վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու ծրագիր չի ներկայացրել: Ավելի ստույգ՝ չի ներկայացրել, թե որոնք են դատարանի ծանրաբեռնվածության պատճառները և ընդհանուրի մեջ ինչ տոկոս են կազմում այդ գործերը: Եթե քանակն այնքան մեծ է, որ քաղաքացիական դատարանի ընդդատության ուղարկելով վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը թոթափելու հարցը դրանով լուծում կստանա, իսկ քաղաքացիական դատարանը կրկին չի՞ ծանրաբեռնվի:

Վարչական դատարանի աշխատակիցներն այս տարվա հունիսին գործադուլ արեցին՝ ծանրաբեռնված աշխատելու և համարժեք չվճարվելու համար, ԲԴԽ նախագահը գործադուլավորներին առաջարկեց պայմանները չընդունելու դեպքում այլ աշխատանք գտնել:

Ինչպես է ծանրաբեռնվում վարչական դատարանը

Մշտադիտարկման շրջանակում ուսումնասիրել ենք նաև վարչական դատարանի ծանրաբեռնվածության պատճառները: Ստացված պատկերը մեզ հիմք է տալիս ասելու, որ վերը ներկայացված օրենսդրական փոփոխությունները բավարար չեն վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը թոթափելու համար:

Կան վարչական ակտեր, որոնցով դատարաններն արդեն ձևավորել են հստակ պրակտիկա (օրինակ՝ Երևանի վճարովի կայանատեղիներին, ավտոմեքենայի ամրագոտին չկապելուն վերաբերող և այլ հարցերով), սակայն վարչական մարմինները, հաշվի չառնելով դատական ակտերում ամրագրված դիրքորոշումները, շարունակում են նմանատիպ վարչական ակտեր կայացնել, ինչը բողոքարկվում է և ծանրաբեռնում դատարանի աշխատանքը:

Վարչական դատարանից հետաքրքրվել էինք՝ երբևէ գրություններ ուղարկվե՞լ են, կամ՝ հարցերը քննարկվե՞լ են վարչական մարմինների ղեկավարների հետ՝ կոնկրետ խումբ գործերով դատարանի դիրքորոշումները փոխանցելու և նույնատիպ ակտերի վիճարկման հոսքը կանխելու նպատակով: Վարչական դատարանի մամուլի պատասխանատու Աբրահամ Աբրահամյանը նշել է, որ այս հարցը փոխանցվել է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի վերլուծության բաժնին՝ ուսումնասիրելու նպատակով:

Վարչական դատարանը ծանրաբեռնելուն մեծապես նպաստում է նաև նախկին պաշտոնյաների դեմ հարուցված քրեական գործերով հետևանքները վերացնելու պահանջով դատախազության ներկայացրած հայցերը։

Գլխավոր դատախազությունը համայնքների նախկին ղեկավարների իրականացրած հողի և անշարժ գույքի աճուրդները և աճուրդային առուվաճառքի պայմանագրերն անվավեր ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջով 2023թ.–ին 222 հայցադիմում է ներկայացրել վարչական դատարան։ Եվս 28 հայցադիմում ներկայացրել է 2024թ.–ի առաջին կիսամյակում։ Հայցեր ներկայացնելու անհրաժեշտությունն առաջացավ համայնքների նախկին ղեկավարների դեմ հարուցված քրեական գործերի քննության արդյունքում։ Սակայն, ինչպես դատարաններն են վերլուծել հայցերը մերժելու իրենց որոշումներում՝ օրենսդրությունը բացառում է տասնամյակներ առաջ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընդունած որոշումներն այսօր անվավեր ճանաչելու հնարավորությունը։

Վարչական դատարանի դատավորները վերադարձրել են հայցադիմումները և ընդարձակ վերլուծությամբ հիմնավորել, որ վիճարկվող որոշումներն ընդունելու ժամանակ դատախազությանը համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցելու իրավասություն վերապահված չի եղել։ Այդ իրավասությունը օրենքով տրվել է միայն 2023թ.ապրիլի 6–ին, նաև՝ դատախազի նոր իրավասության կիրառումը նախատեսվել է միայն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների նկատմամբ։

Դատարանը վերլուծել է նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված՝ գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերը։ Հիմնավորել է, որ սույն գործերի տվյալներով որևէ կերպ չի հաստատվում նշված հիմքերից որևէ մեկի առկայության հանգամանքը, ինչը ևս բացառում է հայց ներկայացնելու իրավական հնարավորությունը։ Բացի այդ, ապօրինի գույքի բռնագանձման հայցի քննությունը վարչական դատարանի ընդդատության սահմաններից դուրս է։

Դատախազությունը վարչական դատարանի որոշումը բողոքարկել է վերաքննիչ վարչական դատարան։ Վերաքննիչ դատարանը կրկնակի ծավալով հիմնավորել է դատախազության բողոքները մերժելու օրենսդրական հիմքերը, մանրամասնորեն վերլուծել է, թե գործող օրենսդրությամբ՝ որ մարմինը և ինչ ժամկետներում կարող էր լուծում տալ այդ հարցին, որը չի արվել։

Ըստ դատարանի՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի՝ ՀՀ Սահմանադրությանն ու օրենսդրությանը հակասող որոշումները վերացնելու կամ դրանք փոփոխելու իրավասությունն օրենքով վերապահված է տեղական

ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) լիազորությունների իրականացման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններին: Այդ մարմինը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն (ՏԿԵՆ) է, որը իրավական հսկողությունն իրականացնում է անմիջականորեն կամ մարզպետների միջոցով:

Նախարարությունը ՏԻՄ–երի ընդունած ոչ իրավաչափ որոշումները վերացնելու կամ դրանք փոփոխելու պահանջով նախ՝ դիմում է տվյալ համայնքի ավագանուն և համայնքի ղեկավարին: Ընդ որում, պահանջը կարող է ներկայացնել որոշումը մարզպետարան մուտքագրվելուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե դիմումն ստանալու օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում, ՏԻՄ–ը չի փոփոխում կամ վերացնում իր որոշումը, ապա դիմումատուն որոշումն անվավեր ճանաչելու պահանջով հայց է ներկայացնում դատարան:

Վերաքննիչ վարչական դատարանը եզրակացրել է, որ սույն գործով հայցադիմում ներկայացրած դատախազությունը դրա իրավունքը չունի, և հայցադիմումի ընդունումը մերժել է: Վճռաբեկ դատարանը նույնպես մերժել է գլխավոր դատախազության ներկայացրած բողոքը:

Գլխավոր դատախազությունը 2023թ.–ին ՏԻՄ որոշումներն անվավեր ճանաչելու, իրավունքի պետական գրանցման վկայականները և սեղանամատյանի գրառումներն անվավեր ճանաչելու պահանջով 35 հայցադիմում ներկայացրել է Աբովյան համայնքի դեմ, 14 հայցադիմում՝ Չարենցավան համայնքի դեմ, 7–ը՝ Վանաձոր համայնքի, 8–ը՝ Ստեփանավան համայնքի, 13–ը՝ Արտաշատ համայնքի, 7–ը՝ Մասիս համայնքի դեմ և այլն:

Գլխավոր դատախազության առաջին հայցերը Աբովյան համայնքի նախկին ղեկավարների ընդունած՝ հողի և անշարժ գույքի աճուրդներն անվավեր ճանաչելու պահանջով էին: Սկզբում Աբովյան համայնքի ներկայիս ղեկավարին պարտավորեցրին նախկին քաղաքապետերի՝ Կարո Իսրաելյանի, Կարապետ Գուլոյանի և Վահագն Գևորգյանի պաշտոնավարման շրջանում՝ 2004-2020 թվականներին, իրականացված հողի և անշարժ գույքի աճուրդներն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնել դատարան: Վարչական դատարանը վերադարձրեց բոլոր հայցերը՝ ասելով, որ Աբովյան համայնքը հայցերը հարուցել է ինքն իր դեմ և այստեղ վեճ չի կարող լինել: Վարչական դատավարության օրենսգիրքը չի թույլատրում նույն անձի կողմից ինքն իր դեմ հայցի հարուցումը:

Աբովյան համայնքի ղեկավարին պարտավորեցրին ներկայացրած 45 հայցերով վարչական դատարանի մերժումները բողոքարկել վերադաս դատարաններ, որոնք նույնպես մերժվեցին: Այնուհետև, նույն հայցադիմումները Գլխավոր դատախազությունը ներկայացրեց վարչական դատարան՝ համայնքների նախորդ

ղեկավարների իրականացրած հողի և անշարժ գույքի աճուրդները և աճուրդային առուվաճառքի պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջով: Դատավորները նույն հիմնավորումներով վերադարձրել են նաև այս հայցադիմումները:

Վարչական վերաքննիչ դատարանն անհիմն է համարել դատախազության բողոքները և մերժել է հայցերը վարույթ ընդունելու և քննելու պահանջը: Վճռաբեկ դատարանը նույնպես չի ընդունել գլխավոր դատախազության բողոքները, որոշումներից մեկում դատախազության բողոքը չքննելու օրենսդրական հիմնավորումներից բացի, նաև այսպիսի մեկնաբանություն է արել:

«Հայցադիմում ներկայացնելու իրավունքի ակնհայտ բացակայության պարագայում դատարանը ոչ թե իրավունք ունի, այլ պարտավոր է մերժել դրա ընդունումը: Օրենսդիրը նման իրավակարգավորմամբ իրավացիորեն խուսափել է ոչ տեղին ու քննության ոչ ենթակա գործերի հետազոտությունից, ինչը հանգեցնում է դատարանի ավելորդ և անհիմն ծանրաբեռնվածության և դատարանի վարույթում գտնվող մյուս գործերի քննության ձգձգումների»,– ասվում է որոշման մեջ:

Գլխավոր դատախազությունը, սակայն, կարևորություն չի տալիս՝ «դատարանն ավելորդ և անհիմն ծանրաբեռնելու մասին» Վճռաբեկ դատարանի զգուշացումներին և շարունակում է հայցադիմումներ ներկայացնել վարչական դատարան:

Գլխավոր դատախազությունից հետաքրքրվել ենք, թե համայնքների նախկին ղեկավարների իրականացրած հողի և անշարժ գույքի աճուրդները և աճուրդային առուվաճառքի պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջով ներկայացրած հայցադիմումներից քանի՞սն է դատարանն ընդունել վարույթ և քննել ըստ էության: Դատախազության Պետական շահերի պաշտպանության վարչության պետ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Տաթևիկ Սարուխանյանը հայտնում է, որ դատարան ներկայացված հայցադիմումների մի մասն ընդունվել է վարույթ, իսկ դրանք վարույթ չընդունելու վերաբերյալ միջանկյալ դատական ակտերը բողոքարկվել են, որոշ դեպքերում՝ վերացվել, որի արդյունքում հայցադիմումները համարվել են վարույթ ընդունված: Ընդ որում՝ բողոքների մի մասը գտնվում է դատարանների վարույթում:

Հրապարակումներից մեկում առանձնացրել էինք ընդդեմ Աբովյան համայնքի ներկայացրած հայցադիմումներից մի քանիսը, որոնք վարույթ են ընդունվել: Դրանք ընդունել են վարչական դատարանի դատավորներ՝ Դանիել Դանիելյանը, Անի Հարությունյանը, Կարեն Զարիկյանը և Արմեն Ներսիսյանը: Ինչպես ներկայացրել ենք՝ այս դատավորների մի մասը խոցելի և թիրախավորված են, և հայցերը վարույթ ընդունելը միայն դրանով էր պայմանավորված, և ոչ թե օրենսդրությունն այլ կերպ ընկալելու և կիրառելու հանգամանքով:

Այժմ մի փոքր վիճակագրությամբ ներկայացնենք, թե վարույթ ընդունված հայցերը դատավարական ինչ ընթացք ունեցան։

Դատավոր Դանիել Դանիելյանը մեկ տարի առաջ երեք հայցադիմում է ընդունել վարույթ՝ ՎԴ/4518/05/23, ՎԴ/4455/05/23, ՎԴ/4487/05/23 գործերով և մինչ օրս չի քննել։

Դատավոր Արմեն Ներսիսյանը վարույթ ընդունած ՎԴ/4551/05/23 հայցով քննութուն է իրականացրել և գործի վարույթը կարճել է։ Որոշման դեմ Գլխավոր դատախազության բերած բողոքը վերաքննիչ վարչական դատարանը մերժել է։ Որոշումը վճռաբեկ դատարան չի բողոքարկվել։ Ա. Ներսիսյանը ՎԴ/4581/05/23 գործով նույնպես վարույթը կարճելու որոշում է կայացրել։ Վերաքննիչ վարչական դատարանը դատախազության ներկայացրած բողոքն ընդունել է վարույթ և դեռևս չի քննել։

Դատավոր Անի Հարությունյանը ՎԴ/4461/05/23 և ՎԴ/4174/05/23 գործերով վարույթը կարճելու որոշում է ընդունել։ Վերաքննիչ դատարանն այս գործերով դատախազության բողոքների քննությունը նշանակել է 2025թ.–ին։ Դատավորը ՎԴ/4150/05/23 գործով վարույթը կարճել է, այդ որոշման դեմ դատախազության բերած վերաքննիչ բողոքը վերադարձվել է։

Դատավոր Կարեն Զարիկյանը ՎԴ/4483/05/23 գործով հայցադիմումը վարույթ է ընդունել 07.06.23թ.–ին։ Այս գործով մեկ նիստ է նշանակվել 16-05-2024թ.–ին, իսկ հաջորդ նիստը չի նշանակվել։

Ահա այսպիսի «հաջողության» պատկեր արձանագրած դատախազությունը մեր հարցին, թե հայցադիմումները վարույթ ընդունելու վերաբերյալ դատարանների կայացրած բոլոր մերժման որոշումները վերադաս դատարան բողոքարկելը դատախազությունն ինչո՞ւ է պարտադիր համարում, հայտնում է. «Դատարանների՝ քաղաքացիական կամ վարչական գործով պետական (համայնքային) շահերին վերաբերող դատական ակտերը բողոքարկվում են միայն այն դեպքում, երբ դրանք դատախազի կարծիքով հիմնավորված չեն կամ անօրինական են։ Մի շարք դեպքերում վերը նշված դատական ակտերի բողոքարկման արդյունքում դատախազության բողոքները վերադաս դատական ատյանների կողմից բավարարվել են, որոշումները վերացվել, և հայցադիմումը համարվել է վարույթ ընդունված»։

Դատախազության հայտնած՝ «դատական ակտերը բողոքարկվում են միայն այն դեպքում, երբ դրանք դատախազի կարծիքով հիմնավորված չեն կամ անօրինական են» մտքի վերաբերյալ մեկ անգամ ևս ընդգծենք, որ Գլխավոր դատախազությունն անխտիր բոլոր մերժումներն է բողոքարկել վերաքննիչ և վճռաբեկ դատարաններ։ Հիշյալ դատարանները նույն պատճառաբանությամբ են մերժել բողոքները, իսկ

վարույթ ընդունված և քննված գործերով հայցերը դարձյալ նույն պատճառաբանությամբ են մերժվել կամ կարճվել։

Տպավորություն ունենք, որ դատախազությունն ընթացակարգային աշխատանք է իրականացնում՝ ինչ–որ մեկին ինչ–որ բան ասելու համար։ Սակայն դրա արդյունքում անմնացորդ սպառում է վարչական դատարանի ռեսուրսը։ Գլխավոր դատախազությանը հարց էինք ուղղել, թե այս գործողություններով, արդյոք, անհիմն չի՞ ծանրաբեռնում վարչական դատարանները և որպես դրա հետևանք՝ չի՞ նպաստում պետական ռեսուրսը վատնելուն։

«Դատախազության կողմից ՀՀ Սահմանադրության և «Դատախազության մասին» ՀՀ օրենքին համապատասխան պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության իրացումը չի կարող դիտարկվել որպես դատարանների ծանրաբեռնում կամ պետական ռեսուրսի վատնում՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի շարք դեպքերում դատական ակտերի բողոքարկման արդյունքում դատախազության բողոքները վերադաս դատական ատյանների կողմից բավարարվում են, որոշումները՝ վերացվում և հայցադիմումները համարվում են վարույթ ընդունված»,– հայտնել է Գլխավոր դատախազության Պետական շահերի պաշտպանության վարչության պետ Տաթևիկ Սարուխանյանը։

Փաստորեն, դատախազությունը հեռանկար չունեցող հայցադիմումներով վարչական դատարանների գործունեությունը կազմալուծելը աշխատանքի ցուցանիշ է համարում, իսկ հայցադիմումները վարույթ ընդունելը՝ ձեռքբերում։

Պետական մարմինների կողմից իրավունքի չարաշահման կամ ոչ արդյունավետ կիրառման հետևանքով է, որ Վերաքննիչ վարչական դատարանում արդեն 40-ից ավելի դատական գործով նիստերը նշանակվել են 2025թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին։ Սա վկայում է ոչ միայն դատարանի ծանրաբեռնվածության, այլև գործերը ողջամիտ ժամկետում քննելու և լուծելու իրավունքի խախտումների մասին։

ԱՄՓՈՓՈՒՄ.

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական և քաղաքացիական դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով պլանավորված միջոցառումների զգալի մասն իրականացվել է 2024թ.–ի ընթացքում։ Սակայն մշտադիտարկման արդյունքները և վիճակագրությունը չհրապարակելու ԲԴԽ–ի որդեգրած քաղաքականության պայմաններում հնարավոր չէ խոսել ձեռնարկված միջոցառումների արդյունավետության մասին։ Մի բան հաստատ է, որ դրանք չեն նպաստել գործերի քննության արագությանը, որը նպատակ էր այս դեպքում։

Քանի որ դատական իշխանությունը դատարանները բեռնաթափելու վերաբերյալ փաստարկված ու չափելի ցուցանիշներ չի ներկայացնում, չենք կարող նաև հավաստի համարել այդ դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու

վերաբերյալ պաշտոնյաների հրապարակած ցուցանիշները։ Դրանք արվում են սոցիալական հարթակներում, վիճակագրություն չի ներկայացվում կամ հրապարակված վիճակագրությունը հիմնավորումներ չունի։

Վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու մասով օրենսդրական փոփոխությունը կիրառության մեջ կդրվի 2025թ.–ից։ Մշտադիտարկման շրջանակում ուսումնասիրել ենք նաև վարչական դատարանի ծանրաբեռնվածության պատճառները։ Մենք ներկայացրել ենք Վարչական դատարանն այլ գործերով ծանրաբեռնելու փաստարկներ, սակայն դատական իշխանությունը դրանք սահմանափակելու համար ոչինչ չի ձեռնարկում։ Ստացված պատկերը մեզ հիմք է տալիս ասելու, որ վերը ներկայացված օրենսդրական փոփոխությունները բավարար չեն վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը թոթափելու համար։

Մասնավորապես. Գլխավոր դատախազությունը համայնքների նախկին ղեկավարների իրականացրած հողի և անշարժ գույքի աճուրդները և աճուրդային առուվաճառքի պայմանագրերն անվավեր ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջով հարյուրավոր հայցադիմումներ է ներկայացնում։ Վարչական դատարանի դատավորները վերադարձրել են հայցադիմումները և ընդարձակ վերլուծությամբ հիմնավորել, որ վիճարկվող որոշումներն ընդունելու ժամանակ դատախազությանը համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցելու իրավասություն վերապահված չի եղել։ Դատախազությունը բոլոր մերժումները բողոքարկում է վերադաս դատարաններում և մերժվում է, սակայն դրանով ծանրաբեռնում է դատարանը։

Վարչական դատարանում կողմերից մեկը պետական կառավարման մարմիններն են, որոնք վերջին տարիներին չարաշահել են պետական ծառայողներին աշխատանքից ազատելու իրենց տրված իրավունքը։ Դատարանը ծանրաբեռնել են մեծ թվով հայցերով, որով պահանջում են անօրինական ճանաչել հրամանները։ Դատարանը 49 գործով անօրինական է ճանաչել հրամանները, որի հիման վրա քաղաքացիներին 436 մլն 408 հազար դրամ գումարային փոխհատուցում է վճարվել պետական բյուջեից։ Սակայն, վարչական մարմինների ղեկավարներին այդ գործերով դատարանի դիրքորոշումները փոխանցելու և նույնանման ակտերի վիճարկման հոսքը կանխելու փոխարեն որոշվել է դրանց քննությունը փոխանցել քաղաքացիական դատարաններին։

ԲԴԽ–ն չի ներկայացնում նաև, թե վարչական դատարանում քննվող գործերի ընդհանուր քանակի մեջ դրանք ինչ տոկոս են կազմում։ Եթե քանակն այնքան մեծ է, որ քաղաքացիական դատարանի ընդդատության ուղարկելով վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը թոթափելու հարցը լուծում կստանա, իսկ քաղաքացիական դատարանը կրկին չի՞ ծանրաբեռնվի։

ԳԼՈՒԽ 2

ԲԴԽ–Ի՝ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՒ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Դատավորների և դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար ԲԴԽ–ն շարունակում է երկու գործիքակազմ կիրառել՝

- դատավորների անունը ժամանակավորապես հանվում է գործերի բաշխման ցանկից,
- դատավորներ է գործուղում մի դատարանից մյուսը:

Ուսումնասիրությունը նպատակ ունի պարզելու՝

- Դատավորների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով գործերի բաշխման ցանկից դատավորների անունը ժամանակավորապես հանելու գործիքի արդյունավետությունը: Գործերի բաշխման ցանկից դատավորների անունները հանելու վերաբերյալ դիմումների հիմնավորվածությունը, դիմումները քննելու թափանցիկությունն ու հրապարակայնությունը:
- Դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով դատավորներին այլ դատարաններ գործուղելու գործիքի արդյունավետությունը:

Մեթոդաբանություն. դատավորների անունները ժամանակավորապես դատական գործերի բաշխման ցանկից հանելու, դատավորներին գործուղելու, դատավորների լիազորությունները դադարեցնելու մասին ԲԴԽ–ի ընդունած որոշումները հրապարակվում են Դատական իշխանության պաշտոնական կայքում www.court.am:

ա/ Դատավորների անունը ժամանակավորապես գործերի բաշխման ցանկից հանելու գործիքի արդյունավետությունն ստուգելու համար ուսումնասիրել ենք, թե գործերի բաշխման ցանկից դատավորների անունները հանելու քանի՞ դիմում է ներկայացվել 2023թ.-ին և 2024թ.-ի առաջին կիսամյակում, դրանցից քանիսն են բավարարվել, քանի՞սն են մերժվել և ինչ հիմնավորումներով:

բ/ **Գործուղված դատավորներ.** Պարզելու համար, թե գործուղումները նպաստո՞ւմ են դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելուն, ընտրել ենք ԲԴԽ-ի որոշումով գործուղված 6 դատավորի, ուսումնասիրել ենք, թե քանի՞ գործ է մակագրվել գործուղված դատավորին, գործուղման ավարտին դատավորները քանի՞ գործով են քննությունն ավարտել, քանի՞սն է կիսատ մնացել և երբվանի՞ց էին քննվում այդ գործերը, դատավորն ի՞նչ պարբերականությամբ է նշանակել դատական նիստերը և այլն: Եթե գործուղման ժամանակամիջոցում նրանք չեն հասցնում ավարտել իրենց վարույթում եղած գործերի քննությունը և դրանք վերամակագրվում

են այլ դատավորների, որոնք պետք է վերսկսեն քննությունը, արդյոք, չե՞ն խախտվում դատական գործերի քննության ողջամիտ ժամկետները:

Գործիք 1. Դատավորների անունը գործերի բաշխման ցանկից որոշակի ժամանակահատվածով հանելը

ԲԴԽ-ն պարբերաբար որոշումներ է ընդունում դատավորների անունը գործերի բաշխման ցանկից որոշակի ժամանակահատվածով հանելու մասին՝ հիմք ընդունելով նրա ծանրաբեռնվածությունը: Դատավորների անունները ժամանակավորապես դատական գործերի բաշխման ցանկից հանելու վերաբերյալ ԲԴԽ որոշումներում դատավորների ծանրաբեռնվածության վերաբերյալ վիճակագրական տվյալներ չկան: Որոշումների համար հիմք են ընդունում՝ աշխատանքային ծանրաբեռնվածության վերաբերյալ դատավորի դիմումը և դատարանի նախագահի գրությունը:

Դատական դեպարտամենտը մեր հարցին՝ բավարարված դիմումների մասով ԲԴԽ–ն մշտադիտարկում իրականացրե՞լ է պարզելու համար, թե այդ դատավորների մոտ ինչպես է առաջացել ծանրաբեռնվածությունը, պատասխանել է. ***«Դատական համակարգ» համակարգչային ծրագրի որոնման գործիքները հնարավորություն չեն տալիս քանակային տվյալներ ստանալ կոնկրետ օրվա դրությամբ առանձին դատավորների վարույթում առկա գործերի վերաբերյալ»:***

Նույն հարցին մեկ ուրիշ անգամ պատասխանել են. ***«ԲԴԽ-ն դատավորների անունները գործերի բաշխման ցանկից հանելու վերաբերյալ որոշումները կայացնում է՝ հաշվի առնելով համապատասխան դատարանների և տվյալ դատավորի ծանրաբեռնվածությունը և վիճակագրական տվյալները: Գրությամբ ներկայացված ժամանակահատվածում դատավորների ծանրաբեռնվածության նվազման կամ դատական գործերի ավարտման վերաբերյալ Դատական դեպարտամենտի կողմից դատական առանձին վիճակագրություն կամ այլ հաշվառում չի վարվում»:***

ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանին խնդրել էինք հայտնել, թե վարչական դատարանի դատավորների անունը գործերի բաշխման ցանկից ժամանակավորապես հանելու ժամանակ քանի՞ գործ են ունեցել վարույթում, և որքա՞ն է եղել նրանց ծանրաբեռնվածությունը: Հարցմանը պատասխանել է Դատական դեպարտամենտի ղեկավար Նաիրի Գալստյանը և հայտնել, որ «դատավորի անուն-ազգանունը բաշխման ցանկից ժամանակավորապես հանելու վերաբերյալ դիմումները քննարկվել են ԲԴԽ–ի դռնփակ նիստերում, հետևաբար տեղեկատվությունը տրամադրման ենթակա չէ:

Դատական դեպարտամենտի ղեկավարը հայտնել է նաև, որ դատավորների ծանրաբեռնվածության ցուցանիշների, դատավորի անունը ժամանակավորապես գործերի բաշխման ցանկից հանելու վերաբերյալ դիմումների ժամանակագրական

հաշվառում կամ այլ տեսակի վիճակագրություն չի վարվում: Մինչդեռ, քրեական գործեր քննող դատավորների վերաբերյալ Դեպարտամենտը վիճակագրություն տրամադրել էր:

Քրեական գործերով. 2023թ.-ի ընթացքում ԲԴԽ որոշումով քրեական գործեր քննող 48 դատավորի անուն է ժամանակավորապես հանվել գործերի բաշխման ցանկից: Դատավորներ կան, որոնց անունները մեկ տարվա ընթացքում երկու, երեք անգամ է հանվել:

2024թ. 1–ին կիսամյակում 17 դատավորի անուն է ժամանակավորապես հանվել գործերի բաշխման ցանկից:

Քաղաքացիական գործերով. 2023թ.–ին քաղաքացիական գործեր քննող 40 դատավորի անուն է ժամանակավորապես հանվել գործերի բաշխման ցանկից:

2024թ. 1–ին կիսամյակում՝ 35 դատավորի անուն է ժամանակավորապես հանվել գործերի բաշխման ցանկից: Դատավորներ կան, որոնց անունները մեկ տարվա ընթացքում երկու, երեք անգամ է հանվել:

Վարչական գործերով. 2023թ.–ին 2 դատավորի անուն է ժամանակավորապես հանվել գործերի բաշխման ցանկից, երկու դատավորի համար կիրառվել է գործերի բաշխման 50% առանձին սահմանաչափ՝ մինչև նույն դատարանի մարզային նստավայրեր տեղափոխվելը:

2024թ.–ին՝ 3 անուն է ժամանակավորապես հանվել գործերի բաշխման ցանկից, դատավորներից մեկի անունը երկու անգամ է հանվել:

Դատավորների անունը գործերի բաշխման ցանկից ժամանակավորապես հանելու մասին ԲԴԽ–ի որոշումներում դատավորների ծանրաբեռնվածության պատճառների մասին վերլուծություն չկա: Որոշում կայացնելու համար ԲԴԽ–ն հիմք է ընդունում ծանրաբեռնված լինելու մասին դատավորի դիմումը և դատարանի նախագահի գրությունը: Որոշումների հիմնավորվածությունն ստուգելու համար ընտրել ենք ԲԴԽ որոշումով գործերի բաշխման ցանկից դուրս թողնված 9 դատավորի՝ քրեական, քաղաքացիական և վարչական գործեր քննող:

Դատավորներն ընտրվել են հետևյալ չափանիշով՝ քանի անգամ է նրանց անունը ցանկից հանվել, ինչպես նաև՝ ապահովելով մարզերի, Երևան քաղաքի, տարբեր ատյանների ներգրավվածությունը: Պարզել ենք նաև, թե տվյալ դատավորի անունը վերջին երեք տարիներին քանի՞ անգամ է գործերի բաշխման ցանկից ժամանակավորապես հանվել: Նույն դատարանի քանի՞ դատավոր է օգտվել այդ հնարավորությունից: Այդ հանգամանքը, արդյոք, նպաստե՞լ է, որպեսզի դատավորը ողջամիտ ժամկետում ավարտի իր վարույթում եղած գործերի քննությունը:

Մեթոդաբանություն. Ընտրել ենք Երևան քաղաքի, Արմավիրի, Շիրակի, Տավուշի մարզերի ընդհանուր իրավասության և Վերաքննիչ քրեական դատարանի դատավորներին: Ուսումնասիրել ենք 2023-24թթ.-ի առաջին կիսամյակում նրանց վարույթում գտնվող գործերի քանակը և միջին տևողությունը՝ ըստ նախապես մշակված մեթոդաբանության:

«Դատալեքս» տեղեկատվական պորտալում հրապարակված տեղեկատվության հիման վրա ուսումնասիրել ենք 2023թ. գործերի բաշխման ցանկից ժամանակավորապես հանված, քրեական ուղղվածության տարբեր ատյանների և մարզերի հինգ դատավորների վարույթում առկա գործերը: Որպեսզի պարզ դառնա նրանց ծանրաբեռնվածությունը, ուսումնասիրել ենք գործերի բաշխման ցանկից հանելու մասին ԲԴԽ-ի որոշմանը նախորդած երեք ամիսների տվյալները:

Նարեկ Բաղալյան, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր

Նարեկ Բաղալյանը պաշտոնում նշանակվել է 2023թ. հունվարի 30-ին: Դատավոր նշանակվելուց մոտ մեկ ամիս անց նա դիմել է ԲԴԽ իր անունը գործերի բաշխման ցանկից հանելու խնդրանքով: Քննարկելով Նարեկ Բաղալյանի աշխատանքային ծանրաբեռնվածության վերաբերյալ դիմումը, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահի գրությունը, ԲԴԽ-ն 2023թ. ապրիլի 3-ին որոշել է մի խումբ դատավորների, այդ թվում՝ Նարեկ Բաղալյանի անունը ժամանակավորապես՝ ապրիլի 4-25-ը, հանել գործերի բաշխման ցանկից:

ԲԴԽ-ից հետաքրքրվել էինք, թե ինչ ծանրաբեռնվածություն է ունեցել դատավորն այն պահին, երբ նրա անունը հանվել է գործերի բաշխման ցանկից: Պարզվում է՝ նորանշանակ դատավորն իր վարույթում ունեցել է 33 գործ, ինչն էլ ԲԴԽ-ն համարել է ծանրաբեռնվածություն:

Ուսումնասիրել ենք ԲԴԽ-ի որոշումից առաջ 3 ամսվա կտրվածքով (2023թ. հունվարի 4-ից ապրիլի 4-ը) հրապարակային տվյալները և արձանագրել, որ Նարեկ Բաղալյանի վարույթում իրապես եղել է 33 գործ: Այդ գործերով 3 ամսվա ընթացքում նա 44 նիստ է հրավիրել, որից կայացել է 37-ը, 7 նիստ չի կայացել դատավորի վատառողջության և դատական նիստերի դահլիճների ծանրաբեռնվածության պատճառով: Վարույթում գտնվող 33 գործից միայն 12 գործով է մեկից ավելի նիստ հրավիրել: Իսկ 5 գործով նշված ժամանակահատվածում ընդհանրապես նիստ չի հրավիրել: Այդ ընթացքում 3 գործով վճիռ է հրապարակել, իսկ 2 գործ ուղարկել է այլ դատարան՝ ըստ ընդդատության:

ԲԴԽ-ի որոշման ժամանակ Ն. Բադալյանը փաստացի իր վարույթում ունեցել է ընդամենը 28 գործ: Այս պայմաններում ԲԴԽ-ն որոշել է, որ Նարեկ Բադալյանն ունի աշխատանքային խիստ ծանրաբեռնվածություն: Ավելին, 4 ամիս անց ԲԴԽ-ն դատավոր Բադալյանի մոտ դարձյալ ծանրաբեռնվածություն է նկատել: 2023թ. օգոստոսի 8-ին կրկին որոշում է կայացրել դատավորի անունը ժամանակավորապես հանել գործերի բաշխման ցանկից՝ օգոստոսի 8-12-ը:

Այս որոշմանը նախորդող 3 ամիսներին դատավորի ծանրաբեռնվածության ուսումնասիրությունից պարզվում է, որ 2023թ. մայիսի 8-ից օգոստոսի 8-ը Նարեկ Բադալյանի վարույթում եղել է 51 գործ: Այդ գործերով 102 նիստ է հրավիրել, որից կայացել է 67-ը, 35 նիստ չի կայացել: Նիստերից 16-ը չի կայացել դատավորի վատառողջության պատճառով, 9 նիստ չի կայացել, քանի որ հերթապահ է եղել և քննել է կալանքի միջնորդություններ:

Նարեկ Բադալյանի քննած գործերով 5 նիստ չի կայացել «առանձին սենյակում գտնվելու պատճառով» (այլ գործով դատական ակտ կայացնելու), 3-ը՝ դատավորների ընդհանուր ժողովին մասնակցելու և 2 նիստ՝ տեխնիկական պատճառներով: 51 գործից միայն 36-ով է մեկից ավելի անգամ նիստ նշանակվել, իսկ 8 գործով նշանակվել է վճռի հրապարակում:

Սաթենիկ Անդրեասյան, Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր

Սաթենիկ Անդրեասյանը ևս համեմատաբար նոր է սկսել դատավորի կարիերան: Այդ պաշտոնում նշանակվել է նույն օրը, ինչ Նարեկ Բաբայանը՝ 2023թ. հունվարի 30-ին: Նշանակվելուց մոտ 7 ամիս անց ԲԴԽ-ն Սաթենիկ Անդրեասյանի անունը 4 ամսով հանել է գործերի բաշխման ցանկից: Պատճառաբանությունը նույնն է՝ ծանրաբեռնվածությունը:

ԲԴԽ որոշմանը նախորդող 3 ամիսների տվյալներով՝ Ս. Անդրեասյանի վարույթում եղել է 76 գործ: Այդ գործերով ընդհանուր նշանակել է 110 դատական նիստ, որից կայացել է 98-ը: 2 նիստի վերաբերյալ տեղեկություն չկա. 7 նիստ չի կայացել այլ գործով դատավորի ծանրաբեռնված լինելու, իսկ 3 նիստ՝ դատավորների ընդհանուր ժողովին մասնակցելու պատճառով: 76-ից միայն 24 գործով է 3 ամսվա ընթացքում մեկից ավելի դատական նիստ նշանակել: Վարույթում գտնվող գործերի կեսով՝ 37 գործով, հաջորդ դատական նիստը նշանակել է 3 ամիս անց:

Հրաչյա Մեխակյան, Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր

Մեր ուսումնասիրած դատավորներից ամենից շատ գործ եղել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հրաչյա Մեխակյանի վարույթում: Հ. Մեխակյանը դատավորի կարիերան սկսել է 2018թ. դեկտեմբերին: Նախ նշանակվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, ապա՝ 2 տարի անց, տեղափոխվել Արմավիրի մարզ:

ԲԴԽ-ն Մեխակյանի անունը գործերի բաշխման ցանկից հանել է տարվա ընթացքում 2 անգամ՝ իրար հաջորդող 3-ական ամիս: Առաջին անգամ նոր գործերի մակագրումից դատավորն ազատվել է 3 ամսով՝ 2023թ. հունվարի 25-ից մինչև ապրիլի 25-ը: «Դատալեքսի» տվյալների հիման վրա պարզել ենք, որ ԲԴԽ-ի որոշումից առաջ՝ 3 ամիսների ընթացքում, դատավորն իր վարույթում ունեցել է 208 քրեական գործ, որոնցով հրավիրել է 264 նիստ: Կայացել է 219 նիստ:

Մնացյալ 45 նիստերը չեն կայացել Հ. Մեխակյանի՝ դատավորների ընդհանուր ժողովին մասնակցելու, այլ գործով ծանրաբեռնված լինելու, կողմերի ոչ պատշաճ ծանուցված լինելու, ուղեկցող ջոկի ծանրաբեռնված լինելու պատճառով: Միայն 9 նիստ հետաձգվել է դատավորների՝ զենքի հետ անվտանգ վարվելու կանոնների, ինչպես նաև զենքի և պաշտպանության հատուկ միջոցների գործադրման ուսուցման պատճառով:

208 գործից միայն 38-ի դեպքում է մեկից ավելի նիստ նշանակվել: Այսինքն՝ 170 գործով 3 ամսվա ընթացքում մեկական նիստ է նշանակվել: 151 գործով հաջորդ դատական նիստը նշանակվել է 3-5 ամիս անց:



Մեկ գործով (ԱՐԴ/0156/01/21) դատական հաջորդ նիստը նշանակվել է 7 ամիս անց, սակայն այդ օրն էլ նիստը չի կայացել, քանի որ մեղադրողը գտնվել է արձակուրդում, և հաջորդ նիստը նշանակվել է 3 ամիս հետո: **Այս անգամ էլ վկան չի ներկայացել, և հաջորդ նիստը նշանակվել է 2 ամիս անց: Այդ օրը վկան դարձյալ չի ներկայացել, և նիստը ևս 2 ամսով հետաձգվել է: Ստացվում է՝ մեկ տարվա ընթացքում դատավորին չի հաջողվել կոնկրետ գործով նիստ անցկացնել:**

Քանի որ դատավոր Հրաչյա Մեխակյանը գործերի մեծ մասով հաջորդ դատական նիստը նշանակել է 4 ամիս անց, 4 ամիս հետո նրա մոտ կրկին ծանրաբեռնվածություն է առաջացել:

ԲԴԽ-ի՝ բաշխման ցանկից Մեխակյանի անունը հանելու ժամկետի լրանալու օրը՝ ապրիլի 25-ին, դարձյալ որոշում է կայացվել Հ. Մեխակյանին ազատել նոր գործերի մակագրումից: Այս անգամ նույնպես նրա անունը ցանկից հանվել է 3 ամսով՝ 2023թ. ապրիլի 26-ից մինչև հուլիսի 26-ը: Այս ժամանակահատվածին նախորդող 3 ամիսների ընթացքում, մեր ուսումնասիրության համաձայն, Հ. Մեխակյանի վարույթում եղել է 177 գործ: Սրանք հիմնականում հետաձգված գործերն են կամ որոնց հաջորդ նիստը նշանակվել է 3-5 ամիս անց: Հ. Մեխակյանը 177 գործով 267 նիստ է հրավիրել, որից 36 նիստ չի կայացել՝ դատավորի վատառողջության, այլ գործով ծանրաբեռնվածության, կողմերի բացակայության, ոչ աշխատանքային օր լինելու պատճառով:

Մասնավորապես՝ գործերից մեկով (ԱՐԴ/0072/01/22) դատավորը դատական նիստ է նշանակել ոչ աշխատանքային օր՝ ապրիլի 24-ին: Այն չի կայացել, և հաջորդ նիստը նշանակել է 3 ամիս հետո: Այս սխալի պատճառով մոտ 7 ամիս այս գործով դատավորը որևէ ձևով ծանրաբեռնված չի եղել, քանի որ դրա նախորդ նիստն էլ նշանակվել էր մոտ 4 ամիս առաջ: Սակայն այդ գործը քանական առումով «ծանրացրել» է դատավորի աշխատանքը:

Մեր ուսումնասիրած երեք ամսվա ընթացքում միայն 52 գործով է մեկից ավելի նիստ նշանակվել: 113 գործով հաջորդ դատական նիստը նշանակվել է 3-5 ամիս ընդմիջումով: Փաստացի, տարվա ուղիղ կեսը՝ 6 ամիս, Հրաչյա Մեխակյանին նոր գործեր չեն մակագրվել, և ծանրաբեռնվել են մարզի քրեական մասնագիտացման մյուս դատավորները:

Դավիթ Բալայան, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր

Դավիթ Բալայանը նոր չէ դատական համակարգում: Դատավորի պաշտոնում աշխատում է արդեն 23 տարի: Նրա անունը 2023թ. ընթացքում երեք անգամ հանվել է գործերի բաշխման ցանկից, սակայն վերը նշված դատավորների համեմատությամբ՝ շատ ավելի կարճ ժամանակահատվածով: Առաջին անգամ Բալայանի անունը հանվել է 2 ամսով՝ 2023թ. հունվարի 31-ից մինչև մարտի 31-ը:

Դատական դեպարտամենտից փոխանցում են, որ Դ. Բալայանի վարույթում եղել է 118 քրեական գործ: Սակայն, մեր ուսումնասիրությունները ցույց են տվել 102 գործ: Տարբերությունն այդքան էլ էական չէ, և տվյալները կարող են տարբերվել՝ հաշվի առնելով, որ «Դատալեքսում» տեղեկատվությունը միշտ չէ, որ հրապարակվում է ամբողջական և ժամանակին: Բացի այդ, դատավորների վարույթում գտնվող գործերի թիվն ամեն օր փոխվում է, հետևաբար տարբերությունը կարող է պայմանավորված լինել նաև այդ հանգամանքով:

102 գործով հրավիրել է 184 նիստ, որից 12-ը չի կայացել, 53 նիստ հետաձգվել է: 8 նիստ հետաձգվել է մեղադրյալին ՔԿՀ-ից դատարան չբերելու պատճառով, իսկ 45-ը՝ ամբաստանյալի, պաշտպանի կամ մեղադրողի բացակայության, դիմումների հիման վրա: 56 գործով մեկից ավելի նիստ է նշանակվել: Ընդ որում, որոշ գործերով 3 ամսվա ընթացքում 5 նիստ է նշանակվել: Այդ ժամանակահատվածում 30 գործի վարույթ կարճվել է, կամ ընդհանուր հիմունքներով կայացվել է դատավճիռ: ԲԴԽ-ն հաջորդ որոշումը կայացրել է ապրիլի 13-ին՝ դատավորին ցանկից հանելով ընդամենը 19 օրով՝ ապրիլի 14-ից մայիսի 2-ը:

Դատական դեպարտամենտից հայտնում են, որ այդ ժամանակ դատավորի վարույթում եղել է 97 քրեական և 31 այլ դատական գործ, այսինքն՝ կալանքի միջնորդություններ և այլն: Քանի որ կալանքի միջնորդությունները հրապարակային

չեն քննվում, այդ առնչությամբ դատական տեղեկատվական համակարգում տվյալներ չկան: Սակայն, այդ որոշմանը նախորդող 3 ամիսների ընթացքում ուսումնասիրել ենք 86 գործ:

86 գործով հրավիրվել է 174 նիստ, որից 5 նիստ չի կայացել, իսկ 47 նիստ հետաձգվել է: **7 նիստ հետաձգվել է դարձյալ մեղադրյալին ՔԿՀ-ից դատարան չբերելու կամ ուշ բերելու պատճառով, իսկ մնացած 40-ը՝ ամբաստանյալի, պաշտպանի կամ մեղադրողի բացակայության, դիմումների հիման վրա:** 62 գործով մեկից ավելի նիստ է նշանակվել երեք ամսվա ընթացքում, 16 գործի վարույթ կարճվել է, կամ ընդհանուր հիմունքներով կայացվել է դատավճիռ:

ԲԴԽ-ն Դ. Բալայանի վերաբերյալ երրորդ որոշումը կայացրել է հունիսի 5-ին՝ դատավորին գործերի բաշխման ցանկից հանելով ընդամենը 10 օրով՝ հունիսի 6-16-ը: Դեպարտամենտի տվյալներով՝ այդ ժամանակ Բալայանի վարույթում եղել է 114 քրեական գործ: «Դատալեքսով» ուսումնասիրել ենք 92 գործ: Այդ գործերով հրավիրել է 185 նիստ, որից 9-ը չի կայացել, իսկ 38-ը հետաձգվել է: 8 նիստ հետաձգվել է մեղադրյալին ՔԿՀ-ից դատարան չբերելու պատճառով: Կեսից ավելիի դեպքում՝ 60 գործով, մեկից ավելի անգամ նիստ է նշանակվել: 24 գործի վարույթ կարճվել է, կամ ընդհանուր հիմունքներով կայացվել է դատավճիռ:

Ստացվում է, որ դատավորի վարույթում գտնվող գործերով միայն 23 նիստ հետաձգվել է, որովհետև պետությունը չի կարողացել իր պոզիտիվ պարտականությունը կատարել և անազատության մեջ գտնվող անձին ժամանակին ներկայացնել դատարան: Մինչդեռ, այդ պատճառով դատարանը լրացուցիչ ծանրաբեռնվել է, ռեսուրս ծախսել:

Այս խնդիրը սրվում է հատկապես այն համատեքստում, որ անազատության մեջ գտնվող անձանց գործերով օր առաջ պետք է որոշումներ կայացվեն, որպեսզի արդարացվելու դեպքում ազատ արձակվեն: Այնինչ, պատկան մարմինները չեն կարողանում նրանց ժամանակին դատարան բերել:

Ռուբիկ Մխիթարյան, Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր

Դատավոր Ռուբիկ Ներսիսյանի անուն-ազգանունը գործերի բաշխման ցանկից հանվել է ԲԴԽ-ի 2023թ. մայիսի 29-ի որոշմամբ՝ 2 ամսով: Դատական դեպարտամենտի տվյալներով՝ դատավորը ծանրաբեռնված է եղել, քանի որ նրա վարույթում առկա էր 14 քրեական և 58 այլ դատական գործ: Մենք որոշմանը նախորդող 3 ամսվա կտրվածքով ուսումնասիրել ենք 17 գործ, որոնցով 16 նիստ է հրավիրել, կայացել է 14-ը: 5 գործով դատավորը որոշումներն ընդունել է գրավոր ընթացակարգով (վերանայման բողոք): Երեք ամսվա ընթացքում 17-ից միայն մեկ գործով է մեկից ավելի նիստ նշանակվել:

Վարչական դատարանի դատավորներ, որոնց անունները հանվել են գործերի բաշխման ցանկից

2023թ.–ին հրապարակված Համաշխարհային բանկի **«Հայաստան. աջակցություն արդարադատության ոլորտի բարեփոխումներին, հայացք ապագային»** մոնիտորինգի զեկույցի համաձայն՝ 2021թ.–ին վարչական գործերի քննության ժամկետի աճը գրեթե ութապատկվել է: Թեև վարչական դատարանում գործերի քննությունը ձգձգելու հիմնական պատճառը դատավորների ծանրաբեռնվածությունն է համարվում, սակայն, ի տարբերություն այլ դատարանների դատավորների, վարչական դատարանի դատավորների անունը հազվադեպ է գործերի բաշխման ցանկից հանվում: Ո՞րն է պատճառը, այս հարցին պարզաբանում չստացանք դատարանից:

ԲԴԽ–ն 2023թ.–ին վարչական դատարանի երկու դատավորի անուն է հանել գործերի բաշխման ցանկից, երկու դատավորի համար էլ կիրառել է գործերի բաշխման 50% առանձին սահմանաչափ՝ մինչև նույն դատարանի մարզային նստավայրեր տեղափոխվելը: Վարչական դատարանի երեք դատավորի անուն էլ գործերի

բաշխման ցանկից հանվել է 2024թ.-ին: Միայն Արթուր Ծատուրյանի անունն է ցանկից երկու անգամ հանվել:

«Դատալեքս» տեղեկատվական պորտալում հրապարակված տեղեկատվության հիման վրա ուսումնասիրել ենք վարչական դատարանի չորս դատավորների վարույթում առկա գործերը, որոնք 2023-2024թթ. ժամանակավորապես հանվել են գործերի բաշխման ցանկից: Չենք ուսումնասիրել միայն Վարչական դատարանի դատավոր Արկադիկ Մկրտչյանի վարույթում գտնվող գործերը, քանի որ ԲԴԽ-ն որոշումը կայացրել է պատկան մարմիններից պարզաբանումներ ստանալու մեր հարցումներից հետո՝ 2024թ. ապրիլի 22-ին:

Որպեսզի պարզ դառնա նրանց ծանրաբեռնվածությունը, ուսումնասիրել ենք գործերի բաշխման ցանկից անունը հանելու օրվան նախորդած երեք ամիսների տվյալները:

Արթուր Ծատուրյան

ԲԴԽ-ի որոշմամբ՝ Արթուր Ծատուրյանի անունն այս տարի արդեն երկու անգամ՝ 2024թ. փետրվարի 22-ից մինչև մարտի 22-ը և մարտի 26-ից մինչև մայիսի 27-ը հանվել է գործերի բախշման ցանկից: Երկու որոշումների հիմքում էլ դրվել է «աշխատանքային ծանրաբեռնվածության վերաբերյալ դիմումը»:

Մինչև 2024թ. փետրվարի 22-ը, այսինքն՝ դատավորի անունը գործերի բաշխման ցանկից հանելու որոշմանը նախորդած 3 ամիսների ընթացքում, Արթուր Ծատուրյանի վարույթում եղել է 311 վարչական գործ: Երեք ամսվա ընթացքում այդ գործերով նշանակվել է 162 նիստ, որից կայացել է 152-ը: Միայն 5 գործով է մեկից ավելի նիստ նշանակվել: 10 գործով նիստերը չեն կայացել՝ վերաքննիչ բողոքի, դատավորների ընդհանուր ժողովին մասնակցելու կամ գործի վարույթը կարճելու պատճառով:

6 գործով առաջին դատական նիստը նշանակել է վարույթ ընդունելուց 10 ամիս անց, 3 գործով՝ 9 ամիս անց, մնացածը՝ 3-8 ամիս անց: 3 ամսվա ընթացքում 152 գործի քննությունն ավարտել է, որից 52-ով վճիռ է կայացրել, իսկ մնացածով՝ նշանակել վճռի հրապարակման ավելի ուշ ժամկետ:



Կան գործեր, որոնցով վճռի հրապարակման օր է նշանակել, օրինակ՝ 10 ամիս հետո: Մասնավորապես, քաղաքացին դիմել է դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի վարչական տույժ նշանակելու մասին որոշումը: Դատավոր Ծատուրյանը հայցադիմումը վարույթ է ընդունել 2023թ. դեկտեմբերին, գործը քննել է գրավոր ընթացակարգով: Այսինքն՝ առանց դատական նիստ հրավիրելու, սակայն վճռի հրապարակման օր է նշանակել վարույթ ընդունելու որոշումից 10 ամիս հետո (ՎԴ/9093/05/23):

Ստացվում է, որ ԲԴԽ-ն դատավորի համար ծանրաբեռնվածություն է համարել 259 գործը, որից 100-ը՝ վճռի հրապարակման փուլում: Ընդ որում՝ դատավորը վճիռները հրապարակում է 3-10 ամսվա ընթացքում: Միայն վճիռ գրելու համար 10 ամիս սահմանելը բավականին երկար ժամանակ է, ինչը խնդրահարույց է նաև ողջամիտ ժամկետում գործը քննելու ու ավարտելու առումով:

ԲԴԽ-ն Արթուր Ծատուրյանին երկրորդ անգամ գործերի բաշխման ցանկից հանել է նախորդ որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից 3 օր անց: Այդ օրերից երկուսը եղել են ոչ աշխատանքային, իսկ մարտի 25-ին Ա. Ծատուրյանին մակագրվել է 7 գործ:

Աննա Դիլբարյան

Դատավոր Աննա Դիլբարյանի անունը գործերի բաշխման ցանկից ժամանակավոր հանվել է ԲԴԽ-ի 2023թ. մայիսի 2-ի որոշմամբ՝ մայիսի 3-ից հունիսի 19-ն ընկած

ժամանակահատվածով: Այս դեպքում ԲԴԽ-ի որոշման հիմքում «դատավոր Աննա Դիլբարյանի դիմումն է, Վարչական դատարանի նախագահի համաձայնությունը»:



ԲԴԽ-ի որոշմանը նախորդող 3 ամիսների ընթացքում դատավորի վարույթում եղել է 208 գործ: Այդ ժամանակահատվածում նշված գործերով Աննա Դիլբարյանը նշանակել է 177 դատական նիստ, որից միայն 37 գործով է մեկից ավելի նիստ նշանակել, իսկ 62 գործով ընդհանրապես նիստ չի հրավիրել: 208 գործից 80-ով կայացվել է վճիռ, որից 34-ով՝ առանց դատական նիստ հրավիրելու: 6 գործ կարճվել է, մեկ գործ ուղարկվել է քաղաքացիական դատարան:

Փաստորեն, ԲԴԽ-ն դատավորի անունը ցանկից հանել է վարույթում 127 գործ ունենալու պատճառով:

Ռուզաննա Ազրոյան

Դատավորի անունը գործերի բաշխման ցանկից 2 ամսով (2024թ. հունվարի 19-ից մարտի 20-ը ներառյալ) հանվել է ԲԴԽ-ի 2024թ. հունվարի 17-ի որոշումով: Ուսումնասիրությամբ պարզել ենք, որ Ռուզաննա Ազրոյանի անունը ցանկից հանելուն նախորդող 3 ամիսների ընթացքում դատավորի վարույթում եղել է 257 գործ:

Նշված գործերով նա 58 նիստ է նշանակել, որից 4-ը չի կայացել: Միայն 5 գործով է մեկից ավելի նիստ նշանակվել, 202 գործով ընդհանրապես նիստ չի հրավիրվել: 105 գործով վճիռ է կայացրել, որից 81-ը՝ առանց դատական նիստ հրավիրելու, 9 գործ

կարճվել է: Դատավոր Ռ. Ազրոյանը 123 գործով միայն վարույթ ընդունելու որոշում է կայացրել և վճռի հրապարակման օր նշանակել 3-5 ամիս հետո:



Արգիշտի Ղազարյան

Դատավոր Արգիշտի Ղազարյանի անունը գործերի բաշխման ցանկից հանվել է ԲԴԽ-ի 2023թ. ապրիլի 3-ի որոշումով՝ նույն տարվա ապրիլի 4-ից հունիսի 5-ը ներառյալ:

ԲԴԽ-ի որոշմանը նախորդած 3 ամիսների ընթացքում դատավոր Ղազարյանի վարույթում եղել է 243 գործ, որից 188-ով է նիստ հրավիրել, կայացել է 176-ը: Միայն 5 գործով է մեկից ավելի նիստ նշանակվել, իսկ 67 գործով նիստ չի հրավիրվել:

243 գործից 37-ով վճիռ է կայացվել: 8 գործով միայն վարույթ ընդունելու որոշում է կայացվել և վճռի հրապարակման օր նշանակվել:

32 գործով վարույթ ընդունելուց հետո առաջին դատական նիստը Արգիշտի Ղազարյանը նշանակել է 8-10 ամիս անց: Ընթացիկ նիստերը ևս տևական ընդմիջումներով է նշանակել: Մասնավորապես, քաղաքացու՝ կենսաթոշակի վերահաշվարկ կատարելուն պարտավորեցնելու պահանջով (ՎԴ/8119/05/19) հայցի քննությունը նշանակել է 11 ամիս անց:



Իսկ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով գործի քննությունը շարունակվում է արդեն 8 տարի՝ 2016թ.-ից: Այս գործով մինչ օրս վճիռ չի կայացրել: Գործը 2019թ. հոկտեմբերից դատավոր Արգիշտի Ղազարյանի վարույթում է: Նիստերից մեկը հետաձգվել է 15 ամսով, և տեղեկություն չկա՝ այդ նիստը կայացե՞լ է, թե՝ ոչ (ՎԴ/4986/05/16):

Դատական կազմերը համալրելու նախագիծ է շրջանառվում

Վարչական դատարանների մամուլի պատասխանատու Աբրահամ Աբրահամյանը մեր գրավոր հարցմանն ի պատասխան հայտնել է, որ Վարչական դատարանի դատավորին էլեկտրոնային եղանակով տարեկան մակագրվում է միջինը՝ 700-750 գործ: Վերաքննիչ վարչական դատարանի դատավորին նույն եղանակով տարեկան մակագրվում է միջինը 350 գործ:

Հարցին, թե ինչ պատճառով են հանվում դատավորների անունները գործերի բաշխման ցանկից, Ա. Աբրահամյանը պարզաբանել է, թե դա արվում է դատարանի բնականոն գործունեությունը, ինչպես նաև գործերի քննության արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Հետաքրքրվել էինք նաև, թե ինչ պատճառով է Վերաքննիչ վարչական դատարանը բողոքը վարույթ ընդունելուց 12-14 ամիս հետո նիստ նշանակում: Դատարանների մամուլի խոսնակը հայտնել է, որ դատական նիստերն ուշացումով նշանակելու պատճառը դատավորների ծանրաբեռնվածությունն է:

Նրա դիտարկմամբ՝ հարցը լուծելու նպատակով ձեռնարկվել են ինչպես օրենսդրական բարեփոխումներ, որոնք միտված են գործընթացներն առավել դյուրին կերպով կազմակերպելուն, այնպես էլ արդեն իսկ շրջանառվել է դատական կազմերն ավելացնելու կապակցությամբ նախագիծը, ինչը նույնպես կնպաստի ողջամիտ ժամկետում գործերի քննությանը:

Ինչ վերաբերում է վերապատրաստման կամ այլ միջոցառումների մասնակցելու պատճառով նիստերը չեղարկելուն, Աբրահամ Աբրահամյանը նշում է, որ հարցը բազմիցս քննարկվել է: Ըստ նրա՝ համապատասխան քայլեր են ձեռնարկվում, որպեսզի դատավորների համար կազմակերպվող վերապատրաստման դասընթացները որևէ կերպ չխոչընդոտեն դատական գործընթացներին:

«Միևնույն ժամանակ, տեղեկացնում ենք, որ վերապատրաստման դասընթացներին մասնակցող դատավորները նման դեպքերում, վերաքննիչ հնարավորության սահմանում, նիստերը տեղափոխում են նախապես նշանակված նիստերից շուտ՝ դատական գործընթացներն ավելի չձգձգելու նպատակով»,- նշում է մամուլի պատասխանատուն:

Գործիք 2. Գործուղված դատավորներ

Բարձրագույն դատական խորհուրդը (ԲԴԽ) տարին մի քանի անգամ դատավորներ է գործուղում այլ դատարաններ: ԲԴԽ-ն պատճառաբանում է, որ նպատակը գործուղվող դատարանի ծանրաբեռնվածությունը թեթևացնելն է կամ այլ դատարանում դատավոր նշանակվելու դեպքում՝ կիսատ թողած գործերն ավարտելը: Սակայն ոչ միշտ է ԲԴԽ-ի որոշումները բխում այդ տրամաբանությունից:

Ուսումնասիրել ենք, թե 2023 և 2024թ. հուլիսի 8-ի դրությամբ ԲԴԽ-ի որոշումներով քանի դատավոր է գործուղվել այլ դատարաններ: Պատահականության սկզբունքով ընտրել ենք 5 դատավոր՝ հասկանալու համար, թե գործուղման ամբողջ ժամանակահատվածում ինչպիսի ծանրաբեռնվածություն են ունեցել նրանք: Ընտրել ենք նաև այն դատավորներին, որոնց գործուղման ժամկետը մի քանի անգամ երկարացվել է:

2023թ.–ին 12 դատավոր է գործուղվել այլ դատարան, որոնցից 7-ը՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանից, մյուսները՝ Սյունիքի, Արարատի և Վայոց ձորի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի առաջին ատյանի դատարանների դատավորներ են: 2024թ. հունիսի 8-ի դրությամբ 4 հիմնական դատավոր է գործուղվել այլ դատարան և 7 դատավոր, որոնք որոշումը կայացնելու օրվա դրությամբ ռեզերվայինի կարգավիճակ են ունեցել:

Դատավոր Վահագն Թորոսյանը վճիռներ է հրապարակել լիազորությունների բացակայության պայմաններում

Վահագն Թորոսյանը դատավորի կարիերան սկսել է 2020թ. հունիսից, երբ Հանրապետության նախագահի հրամանագրով նշանակվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր: Պաշտոնավարումից երեք տարի անց, նախագահի մեկ այլ հրամանագրով նշանակվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր: Սակայն, նշանակումից 3 օր անց, ԲԴԽ-ի որոշմամբ գործուղվել է Շիրակի մարզի դատարան՝ **«շարունակելով քննել Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի կարգավիճակում իր վարույթում գտնված գործերը»:**

Ուշագրավ է, որ Վահագն Թորոսյանը Շիրակի մարզի առաջին ատյանի դատարան գործուղվել է 7 ամսով՝ 2023թ. հունիսի 12-ից մինչև 2024թ. հունվարի 12-ը: «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալների հիման վրա ուսումնասիրել ենք, թե գործուղման 7 ամիսների ընթացքում ինչ գործեր է քննել դատավոր Թորոսյանը և ինչ զբաղվածություն է ունեցել:

Պարզվում է, որ գործուղման ժամանակահատվածում Վ. Թորոսյանը ոչ միայն շարունակել է քննել իր վարույթում եղած գործերը, այլև նրան նոր գործեր են մակագրվել, քանի որ ԲԴԽ-ն նրա անունը չի հանել գործերի բաշխման ցանկից: Մինչդեռ գործուղման նպատակը միայն կիսատ թողած գործերն ավարտելն ու Երևան վերադառնալն էր:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Վահագն Թորոսյան

Ուսումնասիրված ժամանակահատվածը

2023թ. հունիսի 12-ից 2024թ. հունվարի 12

Վարույթում գտնվող գործեր	Նոր մակագրված գործեր	Պարզեցված վարույթով գործեր
808 գործ	698 գործ	661 գործ

Մեկ օրում վճռի հրապարակում	Մեկ օրում վարույթ ընդունած գործեր	Նիստ է հրավիրել
543 գործով	285 գործ	12 գործով

698 գործ մակագրվել է գործուղման ժամանակահատվածում

Այսպես, 2023թ. հունիսի 12-ից մինչև 2024թ. հունվարի 12-ը Վահագն Թորոսյանը քննել է **787 հայցային գործ և 21 վճարման կարգադրություն**։ Բոլոր վճարման կարգադրությունները և 677 գործ դատավորին մակագրվել է գործուղման ժամանակահատվածում։ Փաստացի ստացվում է, որ նրա վարույթում ընդամենը 110 անավարտ գործ է եղել, որի համար էլ գործուղվել էր՝ դրանք ավարտելու։

Թեև մակագրված գործերը բարդ գործեր չեն եղել և հիմնականում քննվել են պարզեցված կարգով, այսինքն՝ առանց դատական նիստ հրավիրելու, փաստաթղթերի հիման վրա, այնուամենայնիվ, դատավորի համար ծանրաբեռնվածություն են առաջացրել և չի կարողացել նույնիսկ դատական ակտերը ժամանակին հրապարակել։

Դատավորի վարույթում եղած 787 գործից 661-ը քննվել է պարզեցված վարույթով։ 79 գործով վճռի հրապարակման օր է սահմանվել 3 ամիս հետո, իսկ 578 գործով՝ 4 ամիս հետո։ 60 գործով վարույթը կարճվել է։ Այսինքն դատավորը կայացրել է միայն կարճման որոշում, ինչը քիչ ժամանակատար է։ Սակայն, նույնիսկ այս պայմաններում Վ. Թորոսյանը չի հասցրել ժամանակին վճիռները հրապարակել։

Պատահել է, որ դատավորը մեկ օրվա ընթացքում 100-ից ավել գործ է վարույթ ընդունել։ Օրինակ՝ 282 գործ վարույթ է ընդունվել 2023թ. հուլիսի 24-ին, 135 գործ՝ օգոստոսի 1-ին և այլն։ Տեսականորեն դժվար է պատկերացնելը, որ մեկ օրվա ընթացքում դատավորը կարող է այդքան գործ ուսումնասիրել և վարույթ ընդունելու որոշում կայացնել։ Վճռի հրապարակման օրերը ևս խտացվել են։ Մասնավորապես, միայն 543 գործով վճռի հրապարակման օր է նշանակվել 2023թ. նոյեմբերի 24-ը։

Պարզվում է, սահմանված օրը վճիռների գերակշիռ մասը չեն հրապարակվել։ Ընդհանրապես մի քանի տասնյակի են հասնում այն գործերի թիվը, որոնցով դատական ակտերը հրապարակվել են ճիշտ ժամանակին կամ առնվազն մինչև մեկ ամիս ուշացումով։ Օրինակ, թիվ ՇԴ/2072/02/23 քաղաքացիական գործով անձին մահացած ճանաչելու վերաբերյալ վճիռը պետք է հրապարակվեր 2023թ. հոկտեմբերի 24-ին, սակայն հրապարակվել է 7 ամիս անց՝ 2024թ. մայիսի 18-ին։ Մեկ այլ գործով (ՇԴ/1707/02/23) վճիռը հրապարակվել է նշանակված օրից 6 ամիս անց և այլն։

Իրավական տեսանկյունից խնդրահարույց են դառնում բոլոր այն դատական ակտերը, որոնք հրապարակվել են 2024թ. հունվարի 12-ից հետո։ Եթե դատական ակտը մինչ այդ ժամկետը չի հրապարակվել «Դատալեքսում», կարելի է ենթադրել, որ պատրաստ չի եղել, իսկ հունվարի 13-ից Վ. Թորոսյանն արդեն լիազորություն չի ունեցել Շիրակի մարզի դատարանում, և մայիսին հրապարակված վճիռը, ստացվում է, կայացրել է արդեն լիազորությունների բացակայության պայմաններում։

Մուշեղ Արամյանին գործուղելու ժամկետը երկու անգամ է երկարաձգվել՝ գործերն ավարտելու համար

Մուշեղ Արամյանը Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր է նշանակվել 2022թ. ապրիլի 28-ին, իսկ 2023թ. հունվարի 26-ին նշանակվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր: Նշանակման հենց հաջորդ օրը ԲԴԽ-ն որոշել է Մ. Արամյանին հունվարի 27-ից մարտի 27-ը ներառյալ, գործուղել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, որպեսզի շարունակի քննել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի կարգավիճակում իր վարույթում գտնված գործերը:

Ուսումնասիրությամբ պարզել ենք, որ գործուղման ժամանակահատվածում Արամյանը ծանրաբեռնված է եղել 15 գործով, որից 7-ը մակագրվել է գործուղման ժամանակահատվածում: Յոթ գործով դատավճիռ է կայացրել, երկու գործ կարճվել է, մեկն ուղարկել է այլ դատարան՝ ըստ ընդդատության: Մնացած 5 գործով դատական ակտերը կայացվել են ավելի ուշ:

Նշված գործերով հրավիրել է 23 դատական նիստ, որից կայացել է 17-ը: Մնացած նիստերը կամ չեն կայացել դատավորի վատառողջ լինելու կամ այլ պատճառներով: ԲԴԽ-ն 2023թ. փետրվարի 23-ին որոշել է Մուշեղ Արամյանի գործուղման ժամկետը երկարաձգել մինչև նույն տարվա մայիսի 29-ը ներառյալ:



«Դատալեքսում» հրապարակված տեղեկատվության համաձայն՝ մարտի 28-ից մինչև մայիսի 29-ն ընկած ժամանակահատվածում, Մ. Արամյանը զբաղված է եղել 9 գործով, որից 4-ը մակագրվել են գործուղման ժամանակահատվածում՝ ապրիլին։ Երկարացված ժամանակահատվածում հասցրել է միայն 3 գործով դատավճիռ կայացնել, մեկ գործ կարճել է, մեկն էլ ուղարկել այլ դատարան, 4 գործերով վճիռները հրապարակվել են ավելի ուշ։

ԲԴԽ-ն որոշել է երկրորդ անգամ երկարաձգել դատավորի գործուղման ժամանակահատվածը՝ մինչև 2023թ. հունիսի 29-ը ներառյալ։ Այս ընթացքում դատավորը հասցրել է վարույթում եղած գործերով վճիռներ կայացնել։

Ստացվում է, որ թեև Արամյանը գործուղվել էր անավարտ գործերի քննությունը շարունակելու համար, սակայն այդ ընթացքում 11 նոր գործ է մակագրվել և երկու անգամ երկարաձգել ժամկետը, որպեսզի գործերի քննությունն ավարտի։ Օրինակ, թիվ ՍԴ1/0011/01/23 քրեական գործը դատավոր Արամյանին մակագրվել է գործուղման առաջին ժամկետի ընթացքում՝ մարտին, սակայն, վճիռը կայացրել է ապրիլին, երբ երկրորդ անգամ երկարացվել է գործուղման ժամկետը։ Մեկ այլ գործ (ՍԴ1/0035/01/22) վարույթ է ընդունվել փետրվարին, սակայն դատավճիռը կայացրել է հունիսին՝ գործուղման ժամկետը երկրորդ անգամ երկարաձգելուց հետո։

Ալլա Քյուրքչյանին այլ դատարան տեղափոխելուց հետո գործուղել են իր վարույթում եղած գործերն ավարտելու համար

Ա. Քյուրքչյանն առաջին անգամ դատավորի պաշտոնում նշանակվել է 2022թ. դեկտեմբերի 19-ին՝ Շիրակի մարզում։ Այնուհետև ԲԴԽ-ի առաջարկով 2024թ. փետրվարի 29-ին նշանակվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր։



Նախագահի հրամանագրից օրեր անց՝ մարտի 4-ին, ԲԴԽ-ն որոշել է արդեն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ալլա Քյուրքչյանին, 2024թ. մարտի 4-ից ապրիլի 12-ը ներառյալ, գործուղել Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ շարունակելով քննել Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի կարգավիճակում իր վարույթում քննված գործերը: Այդ ժամանակահատվածում Ալլա Քյուրքչյանի անուն–ազգանունը հանվել է գործերի բաշխման ցանկից:

Մոտ մեկ ամսով գործուղված դատավորն այդ ժամանակահատվածում քննել ու ավարտել է 8 քաղաքացիական գործ, որից 7–ով կայացրել է վճիռ, իսկ մեկ գործ՝ կարճել է:

ԲԴԽ–ն Սյունիքում դատավոր է նշանակել թոշակի անցնող դատավորին, նա այդպես էլ տեղ չի հասել

Դատավոր Արթուր Մկրտչյանը 2010թ.-ից նշանակվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր: Թոշակի անցնելուց 3 ամիս առաջ, ԲԴԽ-ի առաջարկությամբ՝ 2024թ. մարտի 25-ին, Մկրտչյանը նշանակվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր: Սակայն, նա այդպես էլ Սյունիքում դատավոր չաշխատեց: Հանրապետության նախագահի հրամանագրի հաջորդ օրը ԲԴԽ-ն որոշում է կայացրել Արթուր Մկրտչյանին 2024թ.–ի մարտի 26-ից գործուղել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ շարունակելով քննել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորի կարգավիճակում իր վարույթում գտնված գործերը:



Նշենք, որ Արթուր Մկրտչյանի Սյունիքի մարզից է, և Կապան քաղաքի հաշվառում ունի: Թոշակի անցնելուց 3 ամիս առաջ նրան Սյունիքում դատավոր նշանակելով «լավություն» անելը ոչ մի ձևով արդարացված չէր: Նախ, դատավորն ունեցել է անավարտ գործեր, հետևաբար դրանք պետք է ավարտեր, բացի այդ, Սյունիքում նրան գործեր մակագրելու դեպքում, չէր հասցնի իր վարույթում եղած գործերի քննությունն ավարտել:

Արթուր Մկրտչյանի 65 տարին լրացել է 2024թ. հունիսի 21-ին, հենց այդ օրն էլ դադարեցվել է նրա լիազորությունները: Ա. Մկրտչյանն անավարտ է թողել մոտ մեկ տասնյակ քրեական գործ: Ստացվում է՝ Ա. Մկրտչյանին Սյունիքի մարզի դատարանի դատավոր նշանակելով լրացվել է թափուր հաստիքը, բայց այդպես էլ այդ հաստիքը չի զբաղեցվել:

Գագիկ Հովհաննիսյանին գործուղելուց մեկ տարի հետո հիմնական դատավոր են նշանակել Սնանկության դատարանում

Գագիկ Հովհաննիսյանը զբաղեցնում էր Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնը, երբ ԲԴԽ-ի որոշմամբ 2022թ. փետրվարի 14-ից մեկ տարի ժամկետով՝ մինչև 2023թ. փետրվարի 14-ը, գործուղվել է Սնանկության դատարան: Ժամկետը լրանալու հաջորդ օրը ԲԴԽ-ն որոշել է ժամեկտը երկարացնել մինչև փետրվարի 24-ը:

Գործուղման ժամկետը չլրացած՝ ԲԴԽ-ի առաջարկով, Գագիկ Հարությունյանը փետրվարի 17-ին նշանակվել է Սնանկության դատարանի դատավոր, իսկ դրանից 2 ամիս անց նշանակվել է Սնանկության դատարանի նախագահ՝ երեք տարի ժամկետով:

Գ. Հարությունյանի գործուղումը պատճառաբանվել է հետևյալ կերպ. «Հիմք ընդունելով Սնանկության դատարանի նախագահի գրությունը՝ դատարանում ներկա դրությամբ առկա աշխատանքային ծանրաբեռնվածության վերաբերյալ, Սնանկության դատարանի դատավորների թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարությունը, ողջամիտ ժամկետներում գործերի քննությունն իրականացնելու անհրաժեշտությունը»:

Փաստացի ստացվում է, որ Գագիկ Հովհաննիսյանը մեկ տարի ժամկետով գործուղվել է Սնանկության դատարան, մինչդեռ նպատակաուղղված նրան Սնանկության դատարան տեղափոխելու նպատակ է հետապնդվել:

Գործիք 3. Գործերի քննության ողջամիտ ժամկետները խախտելու հիմքով դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ԲԴԽ-ի կայացրած որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը, դրանց ազդեցությունը համակարգի վրա

ԲԴԽ որոշումների մշտադիտարկում. ուսումնասիրել ենք գործերի քննության ողջամիտ ժամկետները խախտելու հիմքով դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վերջին հինգ տարվա ընթացքում ԲԴԽ-ի կայացրած որոշումները: Պարզաբանել ենք, թե ողջամիտ ժամկետները խախտելու հիմքով դատավորների լիազորությունները դադարեցնելն ինչ ազդեցություն է ունեցել համակարգի վրա:

Վերջին 5 տարվա ընթացքում, գործերի քննության ողջամիտ ժամկետները խախտելու կամ դատավարական ժամկետները չպահպանելու հիմքով ԲԴԽ-ն կարգապահական պատասխանատվության է ենթարկել 14 դատավորի: Դատավորներից 6–ի լիազորությունը դադարեցվել է, որից 3-ը՝ 2024թ.-ի ընթացքում: Դատական դեպարտամենտը չի ուսումնասիրել, թե ԲԴԽ-ի ընդունած այս որոշումներն ինչ ազդեցություն ունեցան դատական համակարգի վրա: Մասնավորապես, մյուս դատավորներն իրենց վարույթում եղած գործերն, արդյոք, ավելի՞ արագ սկսեցին քննել:

2020-2024թթ.–ին լիազորությունները դադարեցված 6 դատավորներից 3-ը եղել են քրեական գործեր քննող, մյուս 3-ը՝ քաղաքացիական: Նրանց վարույթում ընդհանուր եղել է 2914 անավարտ գործ, որոնք փոխանցվել են այլ դատավորների: Միայն 1375 գործ այլ դատավորների փոխանցվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Փիլոսյանից: Նրա լիազորությունները դադարեցվել են 2022թ. դեկտեմբերին:

Անավարտ գործն այլ դատավորի հանձնելու դեպքում գործի քննությունը նորից է սկսվում: Ստացվում է դատական գործը ողջամիտ ժամկետում չքննելու պատճառաբանությամբ դատավորների լիազորությունը դադարեցնելու հետևանքով 2914 գործի քննություն նորից է սկսվել: Իսկ ո՞վ է անհանգստացել այս գործերը ողջամիտ ժամկետում չքննելու հարցով. պարզվում է՝ ոչ ոք:



Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ դատարանում վարույթը պետք է իրականացվի դատարանի նույն կազմով: Վարույթին դատավորի մասնակցության անհնարինության դեպքում նա փոխարինվում է տվյալ դատարանի այլ դատավորով: Դատավորի փոխարինումից հետո դատական վարույթն սկսվում է նորից՝ անկախ այն հանգամանքից, թե գործի քննությունը որ փուլում է գտնվում:

Արդեն 7 տարուց ավելի՝ 2017թ. մարտից դատարանում քննվում է Ոստիկանության Երևան քաղաքի վարչության ուղեկցող գումարտակի երկու ծառայողի և Դատական դեպարտամենտի դատական կարգադրիչների ծառայության նախկին աշխատակցի գործը: Նրանք մեղադրվում են դատարանում քննվող մեկ այլ քրեական գործով ամբաստանյալի համար բարենպաստ դատական ակտի կայացում ապահովելու նպատակով դատավոր Արմեն Բեկթաշյանի հետ այդ հարցը 8000 ԱՄՆ դոլարով լուծելու միջնորդ լինելու, կաշառքը տեղ հասցնելու համար:

Դատավոր Բեկթաշյանը տեղյակ չի եղել կատարվածի մասին, նա որևէ մեկից գումար չի պահանջել: Առանձնապես խոշոր չափերով գումարը՝ 3 մլն 824 հազար դրամին համարժեք 8000 ԱՄՆ դոլարը խաբեությամբ հափշտակվել է, իսկ ամբաստանյալի համար խոստացված բարենպաստ դատական ակտ չի կայացվել:

2019թ. փետրվարին կայացվել է մեղադրական դատավճիռ: Մեղադրյալներից մեկի բողոքի հիման վրա Վերաքննիչ քրեական դատարանը 2020թ. հունիսին վճիռը բեկանել և ամբաստանյալի մասով գործն ուղարկել է առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2020թ. սեպտեմբերին բեկանված գործը մակագրվել է դատավոր Վահե Միսակյանին: Այն ընդունվել է վարույթ և հրավիրվել է 22 դատական նիստ: Սակայն, Արդարադատության նախարարության միջնորդության հիման վրա 2024թ. հոկտեմբերի 4-ին դատավորի լիազորությունները դադարեցվել է, իսկ գործի քննությունը մնացել կիսատ:

Դատավորի լիազորությունները դադարեցվել են, քանի որ ըստ ԲԴԽ որոշման՝ դատավորը գործերից մեկը քննել է ողջամիտ ժամկետների խախտմամբ, այսինքն՝ անհարկի ձգվել է գործի քննության ժամկետները: Դատավճիռը կայացվել է 3 տարվա ընթացքում, ինչն էլ էական կարգապահական խախտման հիմքով դատավորի լիազորությունները դադարեցնելու պատճառ է դարձել:

Դատական դեպարտամենտից «Հետք»-ին հայտնել են, որ Վահե Միսակյանի վարույթում եղած գործերից վերաբաշխման հանձնվել է 132 գործ: Ոստիկանության երկու ծառայողին և Դատական դեպարտամենտի նախկին աշխատակցին առնչվող քրեական գործը վերաբաշխման հանձնված գործերից մեկն է: Այն 2024թ. հոկտեմբերի 22-ին փոխանցվել է դատավոր Տաթևիկ Մուրադյանին և քննությունը սկսվել է սկզբից:

«Արդարադատության արդյունավետությունը մեծապես կախված է այն բանից, թե որքան արագ է այն իրականացվում: Երբ արդարադատության իրականացումը ձգձգվում է, տպավորություն է ստեղծվում, որ դատական համակարգն ի վիճակի չէ կատարելու իր առջև դրված խնդիրները, իսկ դա անվստահություն է առաջացնում արդարադատության ողջ համակարգի նկատմամբ»,- նշված է Վահե Միսակյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության նախարարության ներկայացրած միջնորդության մեջ:

Ստացվում է, որ ԲԴԽ-ի որոշմամբ մեկ գործի քննության ողջամիտ ժամկետը չպահպանելու համար այժմ խախտվելու է 132 գործի ողջամիտ ժամկետում քննությունը, որից տուժելու են, թե՛ ամբաստանյալները, թե՛ տուժողները: Նրանք տարիներով սպասելու են արդարադատության իրենց հերթին:

ԲԴԽ-ն 2024թ. երկու անգամ Վահե Միսակյանին ենթարկել է կարգապահական պատասխանատվության՝ ողջամիտ ժամկետները չպահպանելու կամ դատավարական ժամկետները խախտելու համար: Ապրիլ ամսին հայտարարել է խիստ նկատողություն, իսկ հոկտեմբերի 4-ին դադարեցվել է լիազորությունները: Նույն պատճառով դատավորը մեկ անգամ էլ «նկատողություն» կարգապահական տույժի է ենթարկվել 2022թ. նոյեմբերին:

ԲԴԽ-ն կամ Դատական դեպարտամենտը չունեն հստակ վերլուծություն, ուսումնասիրություն, թե դատավորներն ինչ պատճառով են խախտում դատավարական ժամկետները, որոնք են դրա օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Կարգապահական վարույթներով այդ խախտումներն արձանագրելը՝ հստակ

պատկեր չի տալիս, քանի որ մամուլը բազմիցս է նշել, որ Արդարադատության նախարարությունը ոչ միշտ է նույն սկզբունքներով առաջնորդվում ու դատավորներին պատասխանատվության ենթարկելու միջնորդություններ ներկայացնում ԲԴԽ, իսկ վերջինս էլ նույն մոտեցումը չի ցուցաբերում կարգապահական պատասխանատվության ենթարկելիս:

Լիազորությունները դադարեցված բոլոր դատավորների վարույթներում եղած անավարտ գործերին սպասում է նույն ճակատագիրը: Օրինակ, մոտ մեկ ամսից կլրանա 8 տարին, ինչ լեզվաբան Փառանձեմ Մեյթիխանյանի ամուսնու սպանության գործն ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան: Դատավոր Աննա Դանիբեկյանի նախագահությամբ 2017թ. հունվարից սկսվել է գործի քննությունը, որը մինչ օրս չի ավարտվել:

2024թ. հուլիսի 16-ի որոշմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանի լիազորությունները դադարեցվել են՝ դարձյալ դատավարական ժամկետները խախտելու պատճառաբանությամբ: Մոտ 2 ամիս գործն այլ դատավորի չի հանձնվել և միայն նույն տարվա օգոստոսի 6-ին մակագրվել է դատավոր Կարեն Ֆարխոյանին, իսկ գործի քննությունը սկսվել է նորից: «Դատալեքս» տեղեկատվական համակարգում հրապարակված տեղեկատվության համաձայն արդեն 2 նիստ է հրավիրվել: Այսինքն՝ ողջամիտ ժամկետների պահպանման համար անհանգստացող ԲԴԽ-ի աշխատակազմը՝ Դատական դեպարտամենտը, միայն 2 ամիս կորցրել է գործն այլ դատավորի փոխանցելու համար:

Աննա Դանիբեկյանի լիազորությունները դադարեցնելու պահին, նրա վարույթում եղել է 186 գործ և դրանք փոխանցվել են այլ դատավորների:

Տարիներ շարունակ դատավորները բարձրաձայնում են, որ իրենք ծանրաբեռնված են գործերով և պետությունը համապատասխան քայլեր չի ձեռնարկում, փոխարենը վերջում պատասխանատվությունը բարդվում է հենց իրենց վրա:

Դեռևս 2022թ. նոյեմբերին Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովում հանրային լսումներ էին կազմակերպվել՝ դատարանների ծանրաբեռնվածության և դատական գործը ողջամիտ ժամկետում քննելու վերաբերյալ: Քննարկմանը մասնակցող դատավորները բարձրաձայնում էին, որ պատկան մարմինները պատշաճ քայլեր չեն ձեռնարկում այդ ուղղությամբ, փոխարենը վարույթներ են հարուցվում իրենց դեմ:

Նրա դիտարկմամբ՝ պետությունը, ի դեմս Բարձրագույն դատական խորհրդի և Արդարադատության նախարարության, պետք է առաջնահերթ լուծի բարձրացված խնդիրները նոր միայն վարույթներ հարուցի դատավորների նկատմամբ: ԲԴԽ-ն

դադարեցրել է նրանց լիազորությունները՝ այդպես էլ չլուծելով մատնանշած խնդիրները կամ դրանց անդրադարձել է ոչ համակարգված:

Դատական դեպարտամենտի կողմից վիճակագրություն չի վարվում, վերլուծություն չի կատարվում, թե լիազորությունները դադարեցված դատավորների անավարտ գործերի վերաբաշխման հետևանքով որքանով է ավելացել դատավորների ծանրաբեռնվածությունը: Հանրային ընկալումն այնպիսին է, որ ԲԴԽ-ի համար կարծես նպատակ է դարձել դատավորներին թիրախավորելը՝ այդպես քողարկելով իր ձախողումն ու պետության չկատարած պարտավորությունները: Հանրությանը ներկայացվում է այնպես, որ խախտման մեղավորները միայն դատավորներն են:

Քրեական գործեր քննող դատավորների համար լուրջ հարց է դարձել կալանավորներին Քրեակատարողական հիմնարկներից ժամանակին դատարան չբերելը: Ուղեկցող անձնակազմի, ավտոմեքենաների թիվը քիչ է, այդ պատճառով դատական նիստերը հետաձգվում են՝ մեղադրյալներին դատարան չներկայացնելու պատճառով: Խախտվում է գործերի քննության ողջամիտ ժամկետները, քանի որ նիստերը հետաձգվում են, սակայն պատժվող չկա, քանի որ թիրախը դատավորը չէ:

Մեկ այլ դեպքում՝ Վերաքննիչ վարչական դատարանում արդեն 40-ից ավել դատական գործով (ըստ՝ «Դատալեքսի») նիստերը նշանակվել են 2025թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Ակնհայտ է, որ 2020թ-ից քննվող գործով 2025թ. վերջին նիստ նշանակելը, որի կայանալը դեռ հարց է, քննության ողջամիտ ժամկետի խախտում է, սակայն այդ դատավորների նկատմամբ վարույթներ չեն հարուցվում: Ինչու՞. պատասխանը հստակ է՝ դատավորները ծանրաբեռնված են, իսկ ծանրաբեռնվածությունը թեթևացնելու համար պետությունը քայլեր չի ձեռնարկում:

Նույնիսկ ԲԴԽ-ն է խախտում ժամկետները, որի համար որևէ մեկը պատասխանատվության չի ենթարկվում: 2022թ. մայիսի 30-ին արդարադատության նախարարը կարգապահական վարույթ էր հարուցել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մնացական Մարտիրոսյանի նկատմամբ, որի առիթը եղել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2021թ. մայիսի 18-ի վճիռը: Միջնորդությունն ուղարկվել էր ԲԴԽ՝ կարգապահական պատասխանատվության հարցը որոշելու համար:

ԲԴԽ-ն դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերով հանդես է գալիս որպես դատարան: Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը ԲԴԽ-ն քննում է միջնորդությունը ստանալու պահից՝ 3 ամսվա ընթացքում: Մնացական Մարտիրոսյանին առնչվող միջնորդության քննության ժամանակահատվածում ԲԴԽ-ն մի շարք չհիմնավորված և ակնհայտ կողմնակալ դրսևորումներով չի կայացրել նիստերը, արդյունքում դատավոր Մ. Մարտիրոսյանը չի ենթարկվել պատասխանատվության,

միջնորդությունը թողնվել է առանց քննության՝ կարգապահական գործի քննության համար նախատեսված եռամսյա ժամկետն անցած լինելու պատճառաբանությամբ:

2023թ. հունվարի 30-ին Հանրապետության նախագահի հրամանագրով Մնացական Մարտիրոսյանը նշանակվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի նախագահ՝ երեք տարի ժամկետով: Սա հնարավոր է եղել զուտ այն պատճառով, որ ԲԴԽ-ն չի ունեցել կարգապահական տույժ և անխոչընդոտ նշանակվել է:

Այսինքն՝ ժամկետների առումով ԲԴԽ-ն գրեթե թույլ է տվել նույն խախտումը, ինչ օրինակ, Աննա Դանիբեկյանը, որի վարույթում գտնված գործերից մեկով որոշում է կայացվել քրեական հետապնդումը դադարեցնել՝ պատատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու պատճառով: Աննա Դանիբեկյանն այսօր դատավոր չէ՝ նրա լիազորությունները դադարեցվել են, իսկ Մ. Մարտիրոսյանի կարգապահական գործով ժամկետներ խախտած ԲԴԽ անդամներից Դավիթ Խաչատուրյանը դարձել է Սահմանադրական դատարանի դատավոր, Նաիրա Հովսեփյանն ու Վիգեն Քոչարյանը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներ, իսկ մյուսները, եթե նույնիսկ առաջխաղացում չեն ունեցել, «հետընթաց» էլ չեն ունեցել:

Քիչ չեն նաև դեպքերը, երբ ԲԴԽ-ն ժամկետների խախտման դեպքերով դատավորների նկատմամբ «տարբերակված» մոտեցում է ցուցաբերում: Օրինակ, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբեն Բունիաթյանը գործերից մեկով վճիռը հրապարակել է հայտարարված օրից 1 տարի 2 ամիս հետո, իսկ կողմին ուղարկել 1 տարի 3 ամիս հետո: Սակայն, այս խախտման համար դատավորին հայտարարվել է «նկատողություն»:

Մեկ այլ դեպքում դատավոր Դանիել Մխեյանը 35 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու կապակցությամբ կայացրած որոշումները ժամանակին չեն ուղարկվել՝ դրանք կողմերին ուղարկվել են 3-6 ամիսների ընթացքում: Սրանք հիմնականում եղել են մինչև 2 մլն դրամային պահանջով հայցադիմումներ, որոնք ենթակա էին քննության պարզեցված կարգով: Եթե այդ որոշումները կողմին ուղարկվեին ժամկետների պահպանմամբ, ապա այդ գործերի մեծ մասով վճիռներն արդեն կայացված կլինեին: Այս խախտման համար դատավորին «նախազգուշացում» է հայտարարվել:

ԲԴԽ-ից գուցե ասեն, որ դեպքերն ու իրավիճակները տարբեր են: Իսկ ի՞նչ տարբերություն այն քաղաքացու համար, որի գործի ողջամիտ ժամկետի քննությունը խախտվում է՝ վճիռը չհրապարակելու, որոշումը ժամանակին չուղարկելու, թե՞ անհարկի ձգձգումների պատճառով: Միևնույն է, նրա գործով պատշաճ արդարադատություն չի իրականացվել:

ԱՄՓՈՓՈՒՄ.

ԲԴԽ-ն շարունակում է դատավորների անունը գործերի բաշխման ցանկից հանել՝ առանց լուրջ հիմնավորումների, վերլուծության կամ վիճակագրական տվյալների: Որոշումների համար հիմք է ընդունում ծանրաբեռնվածության վերաբերյալ դատավորի դիմումը և նույն դատարանի նախագահի գրությունը: Դատավորի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով ցանկից նրա անունը ժամանակավորապես հանելու գործիքի կիրառումը չի նպաստում ծանրաբեռնվածությունը նվազեցնելուն: Ավելին՝ այն լրացուցիչ ծանրաբեռնվածություն է ստեղծում մյուս դատավորների համար: Որոշ ժամանակ անց ցանկից հանում են նաև այդ ծանրաբեռնված դատավորներին և այդպես շարունակ:

Մշտադիտարկման արդյունքների հիման վրա՝ գործերի թիվը, նշանակված նիստերի քանակը, հաջորդականությունը, գործերի ձգձգման պատճառները և այլն, մեր կատարած վերլուծությունը ցույց է տալիս, որ դատավորների մի մասն արհեստական ծանրաբեռնվածություն է ստեղծում: Մի մասի մոտ ծանրաբեռնվածություն առաջանալուն նպաստում են այլ գործոններ, որը կներկայացնեք ստորև:

Արտոնյալ ժամանակամիջոցում դատավորներից մեկը կարող է 6 ամսով ազատվել նոր գործերի մակագրումից և պակաս արդյունավետությամբ աշխատել, մինչդեռ մեկ այլ դատավոր, որին կարճ ժամկետով են ազատել նոր գործերի մակագրումից, ավելի արագ քննի գործերն ու թեթևացնի բեռը:

Դատական դեպարտամենտը այս թեմայով «Հետք»–ում արված մեր հրապարակմանը պատասխանեց Դատական իշխանության ՖԲ էջում. ***«Դատական ձգձգումների խնդրի լուծման նպատակով Բարձրագույն դատական խորհուրդը փորձում է համահարթեցնել դատավորների մոտ առկա գործերի քանակը, այդ թվում՝ ծանրաբեռնված դատավորների անունները բաշխման ցանկից ժամանակավորապես հանելու միջոցով: Այս հարցում որոշումներն ընդունվում են հիմնվելով դատարանների նախագահների առաջարկների վրա: Նշված պրակտիկան շարունակվելու է մինչև այս տարվա սեպտեմբեր»:***

Դատական դեպարտամենտը վստահեցնում էր, որ դատավորի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով «անունը գործերի բաշխման ցանկից ժամանակավորապես հանելը», սեպտեմբեր ամսից չի կիրառվելու, սակայն նոյեմբեր ամսին ԲԴԽ–ն շարունակում է այդ գործիքը կիրառել: Սա լրացուցիչ փաստարկ է, որ դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով կիրառված գործողությունները նպատակին չեն ծառայել: Մասնավորապես, եթե 2024թ. հունվարից քաղաքացիական գործեր քննող դատարանները 80%–ով

բեռնաթափվել են, ինչպես հայտարարեց արդարադատության նախարարը, երկրորդ կիսամյակում, այս գործիքակազմը կիրառելու անհրաժեշտություն չպետք է լիներ։

Մինչդեռ, սեպտեմբեր ամսից մինչև նոյեմբերի 15–ը ԲԴԽ որոշումներով քաղաքացիական գործեր քննող 7 դատավորի անուն է գործերի բաշխման ցանկից հանվել։ 2024թ.–ի հունվարից մինչև նոյեմբերի 15–ը՝ 42 անուն, որը երկուսով ավել է 2023թ.–ի ցուցանիշից։ Սեպտեմբեր ամսից քրեական գործեր քննող 6 դատավորի անուն է հանվել գործերի բաշխման ցանկից (2024թ.–ի հունվարից մինչև սեպտեմբեր ամիսը՝ 27 անուն)։ Ընդ որում, դատավորներից մի քանիսի անունը երկու, երեք անգամ է հանվել ցանկից։ Բացատրությունն այն կարող է լինել, որ ծարաբեռնվածությանը նպաստող պատճառները չեն վերացվել։

Այլ դատարաններ դատավորներ գործուղելու մասով իրականացրած մշտադիտարկումը հիմք է տալիս եզրակացնելու, որ ԲԴԽ-ն երբեմն որոշումները կայացնում է առանց լուրջ հիմնավորումների և առանց հիմնական նպատակի իրագործման հետևողականության։ Մի դեպքում դատավորին կարող են գործուղել՝ ժամանակավոր նրա անունը հանելով գործերի բաշխման ցանկից, մեկ այլ դեպքում՝ անունը չհանել և գործուղման ժամկետում այնքան ծանրաբեռնել, որ ստիպված լինեն մի քանի անգամ երկարաձգել գործուղման ժամկետը։

ԲԴԽ-ն դատավորներին գործուղում է, որպեսզի թեթևացնեն դատարանների ծանրաբեռնվածությունը և գործերը քննվեն ողջամիտ ժամկետում։ Մինչդեռ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործուղված և համեմատաբար վարույթում շատ գործ ունեցող դատավորներն են խախտել դատական ակտերի հրապարակման ժամկետները։

ԳԼՈՒԽ 3. ԲԴԽ–ի գործունեության մշտադիտարկում

Դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգի ստեղծում

Դատարանների բեռնաթափումը, գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանումը, հնարավոր չէ իրականացնել առանց վիճակագրության, առանց համակարգում շարունակական մշտադիտարկում իրականացնելու: Դատական բարեփոխումների շրջանակում դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգ է նախատեսվել: Այն **«Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության ծրագրով»** նախատեսված «Էլեկտրոնային դատարան» և «Էլեկտրոնային արդարադատություն» դատական միասնական էլեկտրոնային համակարգի մաս է կազմելու:

Վիճակագրության արդիականացված բաժինն, ըստ պլանավորվածի, դատական իշխանության պաշտոնական կայքում https://court.am կներկայացնեն 2024թ.–ի վերջին, իսկ վիճակագրական և մշտադիտարկման որոշ տվյալներ խոստանում են հրապարակել ռազմավարության ծրագրի իրականացման ավարտին՝ 2025թ.–ի երկրորդ կիսամյակում: Պլանավորել են «30 տոկոսով ավելացնել» հանրությանը հասանելի դատական վիճակագրության ծավալը: Այն էլ պայմանով՝ երբ ամբողջությամբ կգործարկվեն «Էլեկտրոնային դատարան» և «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգերը:

«Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության ծրագրով» նախատեսված այս համակարգերի ներդրման ժամկետը Կառավարության 2023թ. նոյեմբերի 17–ի N 1974-Լ որոշումով արդեն իսկ հետաձգվել է մեկ տարով: Արդարադատության նախարարությունից մեզ տրված պատասխանից դատելով, ամենայն հավանականությամբ, ժամկետը կրկին կերկարաձգվի:

Ռազմավարության ծրագրում նշվում է, որ դատական համակարգի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության տեսանկյունից հիմնաքարային նշանակություն ունի հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակումը:

ԲԴԽ-ն 2024թ. մարտի 18-ին ընդունած որոշումով սահմանել է «Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների կողմից գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու կարգը»: Մշտադիտարկումն իրականացվելու էր 2024թ. հունվարի 3-ից՝ **մշտադիտարկման ենթակա գործերի քննության ողջամիտ ժամկետների նկատմամբ,** որի արդյունքում

կազմվում են կիսամյակային և տարեկան զեկույցներ։ Կիսամյակային զեկույցը ներկայացվում է մինչև օգոստոսի 30-ը, իսկ տարեկան զեկույցը՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 28-ը։

ԲԴԽ-ի մեկ այլ որոշումով, որն ընդունվել է 2024թ. օգոստոսի 26-ին, ԴԴ–ի ղեկավարին հանձնարարվել է՝ սահմանել 2024թ. դատական պրակտիկայի ուսումնասիրման և ամփոփման ծրագիրը, իրականացման կարգը և ժամանակացույցը։ Ծրագրում ներառվելու են 2023թ.-ին ավարտված, դատարանի արխիվ հանձնված և արխիվացման ենթակա քրեական և քաղաքացիական դատական գործերը երկու ցուցիչով՝ գործի քննության միջին տևողության ուղենիշային, նաև՝ դատավարական ժամկետների պահպանման պրակտիկայի ամփոփում։

Մարտի 18-ի որոշման հիման վրա ԴԴ–ն հայտարարեց, որ սկսել է ուսումնասիրությունը այս պահին առավել ծանրաբեռնված դատավորների շրջանում։ Մասնավորապես, հարցումներ են ուղարկվել քաղաքացիական, քրեական և վարչական դատարաններ՝ խնդրելով պարզաբանումներ ներկայացնել։ «Ստացված պատասխանների վերլուծության արդյունքում վեր կհանվեն դատական գործերի քննության ձգձգումներին պատճառ հանդիսացող խնդիրները և կմշակվեն դրանց լուծման ուղղությամբ առաջարկները»,– ասվում էր հայտարարության մեջ։

Ռազմավարության ծրագրի պահանջին հակառակ, ԲԴԽ-ի ընդունած մշտադիտարկման կարգով զեկույցների հրապարակումը պարտադիր չի համարվում։ Կիսամյակային զեկույցը, որը պետք է մինչև օգոստոսի 30-ը պատրաստ լիներ, դատական իշխանության պաշտոնական կայքում չի հրապարակվել։ Մշտադիտարկման արդյունքներն, ըստ էության, հասանելի են միայն արդարադատության նախարարին և ԲԴԽ նախագահին։

Դրանից հետո երկու դատավորի լիազորություն դադարեցվեց գործերի քննությունը ձգձգելու հիմքով։ Հայտարարվեց, որ ՀՀ նախկին երկու նախագահների վերաբերյալ «հանրային հնչեղություն» ունեցող քրեական գործերը ողջամիտ ժամկետներում չեն քննել։ Այդ է պատճառը, որ նրանք չդատապարտվեցին։ Դատարաններում կամ այդ դատավորների վարույթում քննվող այլ գործերով ձգձգումների պատճառների և դրանք լուծելու ուղղությամբ արված առաջարկների մասին հաղորդագրություն չի եղել։

Դատավորների լիազորությունները դադարեցնելու որոշումներից տպավորություն է ստեղծվում, որ ԴԴ–ն առանձնացված վիճակագրություն է տրամադրում թիրախավորված դատավորների մասով։ Երբ գրեթե բոլոր գործերով են քննության ողջամիտ ժամկետները խախտվում, մեկ կամ երկու դատավորի պատմուճանից

զրկելն այդ անձանց թերացումը չի կարող համարվել: Սա համակարգային խնդիր է, որի համար բարեփոխումների ծրագիր են ընդունել:

Բարեփոխումների պատասխանատուները համոզիչ փաստարկներ պետք է ներկայացնեն, որ մշտադիտարկումը համակարգի գործունեությունը բարելավելու նպատակով է իրականացվում: Դատական իշխանությունը հանրության վստահությունը բարձրացնելու խնդիր ունի, դա ևս ռազմավարության ծրագրով ստանձնած պարտավորություն է: Հետևաբար, պարտավոր է թափանցիկ գործունեություն իրականացնել՝ ցույց տալու համար, որ արված հրապարակումների, ԲԴԽ-ի ընդունած որոշումների հիմքում հիմնավոր ապացույցներ և վերլուծություններ կան: Հավաստիացնի, որ դատարանների վարույթում եղած գործերը մշտադիտարկվել են համակարգի գործունեության վերաբերյալ ճիշտ պատկեր ունենալու և ոչ թե սոցիալական որոշակի խավերի համակրանքը շահելու նպատակով:

Դատական համակարգի գործունեության վերաբերյալ վիճակագրության և ճշգրիտ վերլուծությունների բացակայության պայմաններում ԲԴԽ-ի ընդունած որոշումները չեն կարող օբյեկտիվ լինել առնվազն հետևյալ դեպքերում՝

ա/ դատարանների և առանձին դատավորների ծանրաբեռնվածությունը գնահատելու և համապատասխան որոշումներ կայացնելու (դատավորի անունը գործերի բաշխման ցանկից ժամանակավորապես հանելու),

բ/ դատավորի(ների) գործունեությունը գնահատելու,

գ/ դատավորին (ների) կարգապահական տույժի ենթարկելու,

դ/ դատավորի (ների) լիազորությունը դադարեցնելու,

ե/ դատավորների առաջխաղացման ցուցակում ընդգրկելու և այլ դեպքերում:

ԲԴԽ–ն 9 նստավայր փակեց մարզային դատարաններում

Գործերի քննությունը ձգձգելուն նպաստող տարածված պատճառներից մեկը դատական նիստերի դահլիճների ծանրաբեռնվածությունն է:

2024-ի հունվար ամսին Դատական դեպարտամենտը (ԴԴ) հայտարարեց Հայաստանի ամբողջ տարածքում գործող 51 դատարաններից 9 նստավայր փակելու մասին: Փակվեցին Աշոցքի, Տաշիրի, Թալինի, Արթիկի, Մարտունու, Վեդու, Եղեգնաձորի, Սիսիանի և Մեղրիի նստավայրերը: Այդ որոշումով փակվեց Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի երկու նստավայր՝ Աշոցքի և Արթիկի, Սյունիքի մարզում երկու նստավայր՝ Սիսիան և Մեղրի, մեկական նստավայր հինգ այլ մարզերում:

Նստավայրերը փակելու որոշումը Դատական դեպարտամենտը հետևյալ կերպ պատճառաբանեց.

ա/ Աշոցքում և Մեղրիում տևական ժամանակ չի եղել մշտապես տեղակայված դատավոր, բայց այդ դատարանի շենքերում կատարվել են կոմունալ և պահպանության ծախսեր, իսկ դատական ծառայողները պետական բյուջեից ստացել են աշխատավարձ։

բ/ 9 նստավայրերից 8-ն այնպիսի անմխիթար շենքային պայմաններում են գործել, որ պարզապես հարիր չէին դատարանի բարձր դիրքին և վնասում էին դատարանի հեղինակությանը։

գ/ Նստավայրերը փակելու որոշումը կայացնելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ ներդրվել են քաղաքացիական դատավարության նոր էլեկտրոնային գործիքակազմեր, և շատ դեպքերում անհրաժեշտություն չի լինի ֆիզիկապես ներկայանալ դատարան։

«Այս որոշման արդյունքում պետությունը կխնայի տարեկան շուրջ 200 մլն դրամ»,- ասվում էր Դատական դեպարտամենտի հայտարարության մեջ։

Արդարադատության արդյունավետության Եվրոպական հանձնաժողովի 2020թ. զեկույցի համաձայն՝ 2018թ.-ին Հայաստանում առաջին ատյանի դատարանների միջին թիվը 100,000 բնակչի հաշվով կազմել է 0,5 միավոր, ինչը զգալիորեն ցածր է Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի միջին թվաքանակից՝ 1,89 միավոր։

«Քանի որ ինտերնետի մատչելիությունը բարելավվում է, դատական շենքերի ցանցի հետագա ընդլայնման անհրաժեշտություն կարող է չառաջանալ»,- ասվում է ՀԲ-ի զեկույցում։ Ենթադրում են, որ արդարադատության ծառայությունների ֆիզիկական հասանելիությունը բարելավելու հետագա ջանքերը կարող են, թերևս մասամբ, իրականացվել առցանց, օրինակ՝ փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացնելը։

Նկատի ունենանք, որ ՀԲ-ի զեկույցը պատրաստվել է մինչև 9 նստավայրերի փակվելը, և զեկույցի հեղինակները հավանական են համարել, որ էլեկտրոնային արդարադատությունը գործարկելուց հետո, հնարավոր է, դատարանների նոր շենքեր ավելացնելու անհրաժեշտություն չլինի։

Համաշխարհային բանկի 2023թ.-ի՝ «Հայացք ապագային» զեկույցում նշվում է, որ Հայաստանում դատարանների շենքերը բավարար տարածքներ չունեն։ Պարզ չէ նաև, թե գործող դատարաններում քանի դահլիճ կա։ Դատական նիստերի դահլիճների թիվն, արդյոք, համաչա՞փ է գործող դատավորների թվին։

Ըստ առաջարկված եվրոպական չափանիշների՝ դատական նիստերի դահլիճների թիվը որոշում են ակնկալվող դատալսումների ժամանակացույցի հիման վրա՝

կախված տվյալ դատարանում քննվող գործերի քանակից և հաշվի առնելով գործունեության ցանկացած աճ (այսինքն՝ 30%)։ Ամերիկյան չափանիշներով՝ մեկ դատավորի համար մեկ դահլիճ պետք է նկատի ունենալ։

Հայաստանում հետազոտված դատարաններում մեկ դատավորի հաշվով դատական նիստերի դահլիճների հարաբերակցությունը կազմում է 1,135 միավոր։ Այսինքն, 9 նստավայր փակելուց հետո դատական դահլիճների քանակի անհամապատասխանությունը դատավորների այսօրվա թվաքանակի հետ ավելի է մեծանում։ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 12 դատավոր ունի։ Երկու նստավայր փակելուց հետո բոլոր դատավորներն ապահովվելո՞ւ են դահլիճներով։ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 23 հոդվածի համաձայն՝ Շիրակի մարզում դատավորների կազմում առնվազն 13 դատավոր պետք է լինի։

«Հայացք ապագային» զեկույցում նշվում է, որ Հայաստանի դատարանների շենքերից ոչ մեկը չի համապատասխանում միջազգային չափանիշներին։ Սա վերաբերում է դատարանների դահլիճների և գրասենյակների ոչ բավարար տարածքներին։ Այս չափանիշներին համապատասխանելու համար շենքերի գրեթե կեսը վերանորոգման և ընդլայնման կարիք ունի, իսկ մնացածը պետք է ամբողջությամբ փոխարինվի կամ վերակառուցվի։

ԱՄՓՈՓՈՒՄ.

Դատաիրավական բարեփոխումները վստահություն չեն ներշնչում, որովհետև բարեփոխումների պատասխանատուները վիճակագրական ցուցանիշներ, հաշվետվություններ չեն հրապարակում։ Այսինքն՝ թաքցնում են «հաջողությունների» հասնելու ապացույցները։ Վիճակագրության փոխարեն հրապարակումներ են կատարում սոցիալական ցանցերում՝ փորձելով հանրությանը համոզել, որ բարձր ցուցանիշներ են ապահովել։ Սոցիալական ցանցերում արվող հրապարակումներն արժանահավատ չեն կարող համարվել, քանի որ դրանք պաշտոնական հարթակ կամ պաշտոնական փաստաթուղթ չեն։ Հասարակական կազմակերպություններն ու լրատվամիջոցները զրկված են տեղեկատվությունից և բարեփոխումների ընթացքը գնահատելու հնարավորությունից, որովհետև չափելի արդյունքներ չունեն։

Այդ բացը նկատել էին նաև 2023թ.-ին Համաշխարհային բանկի հրապարակած՝ **«Հայաստան. աջակցություն արդարադատության ոլորտի բարեփոխումներին, հայացք ապագային»** զեկույցի հեղինակները։

«… ռազմավարության իրականացման և անկախ ու արդյունավետ դատական համակարգի նպատակին հասնելու հիմնական ռիսկերից մեկը բարեփոխումների նախագծման հիմքում ընկած հիմնավոր ապացույցների և վերլուծությունների

բացակայությունն է: Այդ ռիսկն այսօր էլ առկա է, որովհետև առաջարկվող երեք կարևորագույն գործողություններից մեկը՝ ***հզորացնել տվյալների հավաքումը և վիճակագրությունը*** *քաղաքականության որոշումների և բարեփոխումների մասին տեղեկացնելու և դրանց հետևելու համար, չի արվել*»,– ասվում է զեկույցում:

Բազմաթիվ մշտադիտարկումներով հիմնավորվել է, որ դատական գործերի քննությունը ձգձգելու պատճառ է նաև նիստերի դահլիճների զբաղվածությունը: Եվրոպական չափանիշներով՝ նիստերի դահլիճների թիվը որոշում են ակնկալվող դատալսումների ժամանակացույցի հիման վրա՝ կախված տվյալ դատարանում քննվող գործերի քանակից և հաշվի առնելով գործունեության ցանկացած աճ (մինչև 30%): Ամերիկյան չափանիշներով՝ մեկ դատավորի համար մեկ դահլիճ պետք է նկատի ունենալ:

Հայաստանում հետազոտված դատարաններում մեկ դատավորի հաշվով դատական նիստերի դահլիճների հարաբերակցությունը կազմում է 1,135 միավոր: Այս պայմաններում ԲԴԽ–ն 9 նստավայր փակեց, որից հետո դատական դահլիճների քանակի անհամապատասխանությունը դատավորների այսօրվա թվաքանակի հետ շատ ավելի է մեծանում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.

«Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության ծրագրում» դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու չափելի ցուցանիշներ չեն ներառվել: ԲԴԽ-ի որոշումով 2024թ. հունվարից մշտադիտարկում պետք է իրականացվեր գործերի քննության ողջամիտ ժամկետների նկատմամբ և կիսամյակային ու տարեկան զեկույցներ ներկայացվեին, որը չի հրապարակվել: Հետևաբար հնարավոր չէ գնահատել, թե իրականացված միջոցառումների արդյունքում դատական համակարգում առկա երկու հիմնական խնդրահարույց հարցերը՝ **ընդհանուր իրավասության դատարանները բեռնաթափելը և դատաքննության արագությունը,** որքանով բարելավվեցին:

ԲԴԽ նախագահի և ԱՆ–ի հայտարարած՝ իրականացված միջոցառումների արդյունքում քաղաքացիական գործեր քննող դատարանները 2024թ. 1–ին կիսամյակում բեռնաթափվել են 80%-ով, պաշտոնական վիճակագրությամբ չի հիմնավորվում: ԲԴԽ նախագահն այդ ցուցանիշը հաստատող վիճակագրական տվյալներ չի ներկայացնում, իսկ Նոտարական պալատից ստացված վիճակագրական տվյալները չեն համապատասխանում արդարադատության նախարարի հրապարակած թվերին: Փաստական հիմնավորումներ չկան, որ դատական գործերն ավելի արագ են քննվում:

Քրեական գործեր քննող դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու միջոցառումները և դրա արդյունքում հայտարարված 40%–ով բեռնաթափելը, նույնպես հիմնավորում չունի: Մեր մշտադիտարկումը դատաքննությունը ձգձգելու այլ պատճառներ բացահայտեց՝ կալանավորին ՔԿՀ-ից դատարան չեն բերում՝ ուղեկցող անձնակազմի ծանրաբեռնված լինելու, մեքենա, վառելանյութ չլինելու, վկաներին դատական նիստերին չապահովելու, դատական նիստերի դահլիճների ծանրաբեռնվածության և այլ պատճառներով: Դրանք համակարգային խնդիրներ են, սակայն ԱՆ–ն և ԲԴԽ–ն միջոցներ չեն ձեռնարկում վերացնելու ուղղությամբ:

Վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով կատարված օրենսդրական փոփոխությունները, որոնք կիրառվելու են 2025թ.–ից, մեր կարծիքով, չեն նվազեցնելու դատարանի ծանրաբեռնվածությունը: Նախ՝ ԲԴԽ–ն չի ներկայացնում, թե **այդ գործերը** ՎԴ–ի վարույթում քանի տոկոս են կազմում: Եթե դրանց թիվը մեծ է՝ ուրեմն ՎԴ–ի ծանրաբեռնվածությունը կնվազի, բայց, արդյոք, գործերի այդ քանակությունը չի ծանրաբեռնի քաղաքացիական դատարանը, որի ընդդատությամբ են քննվելու հաջորդ տարվանից:

Ուսումնասիրությունը ՎԴ–ի ծանրաբեռնվածության այլ պատճառներ է բացահայտել: Կան վարչական ակտեր, որոնցով դատարաններն արդեն հստակ պրակտիկա են ձևավորել, օրինակ, Երևանի վճարովի կայանատեղիներին, ավտոմեքենայի

ամրագոտին չկապելուն վերաբերող և այլ հարցերով: Սակայն վարչական մարմինները, հաշվի չառնելով դատական ակտերում ամրագրված դիրքորոշումները, շարունակում են նմանատիպ ակտեր կայացնել, ինչը բողոքարկվում է և ծանրաբեռնում դատարանի աշխատանքը:

ՎԴ–ն ծանրաբեռնված է նաև Գլխավոր դատախազության՝ համայնքների նախկին ղեկավարների իրականացրած հողի և անշարժ գույքի աճուրդները և աճուրդային առուվաճառքի պայմանագրերն անվավեր ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջով վարչական դատարան ներկայացրած հայցերով: Դատարանը վերադարձնում է հայցադիմումները հիմնավորելով, որ վիճարկվող որոշումներն ընդունելու ժամանակ դատախազությանը համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցելու իրավասություն վերապահված չի եղել: Այդ իրավասությունը օրենքով տրվել է միայն 2023թ. ապրիլի 6–ին, նաև՝ դատախազի նոր իրավասության կիրառումը նախատեսվել է միայն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների նկատմամբ: Սակայն դատախազությունը շարունակում է հայցերը վերադարձնելու որոշումները բողոքարկել վերադաս դատարաններ:

Նույն հայցերը սկզբում համայնքների ղեկավարներին պարտավորեցրին ներկայացնել: Վարչական դատարանի՝ հայցը վարույթ չընդունելու բոլոր որոշումները բողոքարկվեցին վերադաս դատարաններում և մերժվեցին:

Թեև գործերի քննությունը ձգձգելու հիմնական պատճառը դատավորների ծանրաբեռնվածությունն է համարվում, սակայն, ի տարբերություն այլ դատարանների, ՎԴ–ի դատավորների անունը հազվադեպ է գործերի բաշխման ցանկից հանվում: Այս գործիքի կիրառումը, եթե նպաստում է դատավորների ծանրաբեռնվածությունը նվազեցնելուն, ուրեմն ինչու այն չեն կիրառում վարչական դատարանի դատավորների համար: ԲԴԽ–ն ու ԴԴ–ն այս հարցին չեն պատասխանել:

Դատական Դեպարտամենտը ապրիլի 1–ին հայտարարեց. «Դատական ձգձգումների խնդիրը լուծելու նպատակով ԲԴԽ–ն փորձում է համահարթեցնել դատավորների մոտ առկա գործերի քանակը, այդ թվում՝ ծանրաբեռնված դատավորների անունները բաշխման ցանկից ժամանակավորապես հանելու միջոցով: **Նշված պրակտիկան շարունակվելու է մինչև այս տարվա սեպտեմբեր»:**

Նոյեմբեր ամիսն է և ԲԴԽ–ն շարունակում է այդ գործիքը կիրառել: Սեպտեմբեր ամսից մինչ նոյեմբերի 15–ը ԲԴԽ որոշումներով քաղաքացիական գործեր քննող 7 դատավորի անուն է գործերի մակագրման ցանկից հանվել, քրեական գործերով՝ 6 դատավորի անուն (2024թ.–ից մինչև սեպտեմբեր ամիսը՝ 27 անուն): Ընդ որում, դատավորներից մի քանիսի անունը երկու անգամ է հանվել ցանկից:

Սա լրացուցիչ փաստարկ է, որ դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով կիրառված միջոցառումները նպատակին չեն ծառայել: Մասնավորապես,

2023թ.–ին, երբ քաղաքացիական գործեր քննող դատավորների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով միջոցառումներ չէին իրականացվել, 40 դատավորի անուն էր հանվել գործերի բաշխման ցանկից։ 2024թ.–ին, երբ դատարանը բեռնաթափելու ուղղությամբ մի քանի միջոցառում է իրականացվել՝ նոյեմբերի 15–ի դրությամբ 42 դատավորի անուն է հանվել մակագրման ցանկից։